# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 39 (1389) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 01, 2008
VOLUME 28, NO. 39 (1389) SATURDAY, NOVEMBER 01, 2008

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ԹՈՒՐՔ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐ ՕՊԱՄԱՅԻ ԵՒ ՄԸՔՔԷՅՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐՈՒ ՄՕՏ

*Հոկտեմբեր 28-ին, Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Էրտողան երկու Թուրք դիւանագէտներ գործուղած է Միացեալ Նահանգներ՝ նախագահի երկու թեկնածուներու՝ դեմոկրատ Պարաք Օպամայի եւ հանրապետական Ճոն Մըքքէյնի խորհրդականներուն հետ հանդիպելու նպատակով:*

*Թրքական «Հուրիէթ» թերթի համաձայն, Էրտողանի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Ահմետ Դավութօղլուն եւ Թուրքիոյ խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի փոխնախագահ Սուաթ Կինիկլիօղլուն պիտի ներկայացնեն քրտական ահաբեկչութեան, Հայոց Ցեղասպանութեան, Կիպրոսի խնդրի, Իրաքի տարածքային ամբողջականութեան եւ տարածաշրջանային այլ զարգացումներու առնչութեամբ Թուրքիոյ դիրքորոշումները:*

*«Թուրքիան պիտի յորդորէ Միացեալ Նահանգներու նախագահութեան թեկնածուներուն լսել թրքական տեսակէտները այսպէս*

*Շար.ը էջ 19*

## ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ-. «ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ն ՈՒ ՄԱՐՏԻ 1-Ը ԲԱՑԱՅԱՅՏՈՒԱԾ ԵՆ»



*Ընդդիմադրութեան առաջնորդները Եռաբլուր կատարածայցի ընթացքին*

*Երկուշաբթի Հոկտեմբեր 27-ին, քոչարեանական իշխանութեան կողմէ Հայաստանի խորհրդարանին ներս 1999 թուականին գործադրուած ոճրագործութեան տարելիցի առթիւ Պանթէոն եւ Եռաբլուր այցելեցին ընդդիմութեան ղեկավարները: Կարէն Դեմիրճեանի եւ Վազգէն Սարգսեանի շիրիմներու ծաղիկներ դնելէ ետք, նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան պատասխանելով լրագրողներու հարցերուն, յայտարարեց որ այս իշխանութեան օրօք գործուած ոճրագործութիւնները թէեւ չեն բացայայտուած, սակայն ժողովուրդի համար Հոկտեմբեր 27-ն ու Մարտ 1-ը արդէն իսկ բացայայտուած են:*

*«Հոկտեմբերի 27-ն էլ, Մարտի 1-ն էլ այս իշխանութիւնների օրօք չեն բացայայտուի: Այն իշխանութիւնը, որը գործել է այդ յանցագործութիւնները, ինչպէ՞ս պէտք է բացայայտի դրանք»,- հարց տուած է առաջին նախագահը՝ աւելցնելով, որ Ստալինի ոճրագործութիւններն ալ բացայայտուեցան միայն անոր մահուընէ ետք: «Քանի դեռ այսպիսի բռնապետութիւն է, իհարկէ, չի բացայայտուի: Այս իշխանութիւնն է գործել այդ ոճիրը, ինչպէ՞ս կը բացայայտի»:*

*Իսկ թէ մինչ օրս ի՞նչն է պատճառը, որ գործող իշխանութիւնները չեն բացայայտած «27-ի» ոճրագործութիւնը՝ Տէր-Պետրոսեան պատասխանեց մէկ բառով՝ «մեղսակցութիւնը» եւ աւելցուց. «Եթէ անգամ թաքցրել են, խանգարել են հետաքննութեանը, չեն ապահովել դատարանի անաչառ վճիռ, դա արդէն մեղսակցու-*

*Շար.ը էջ 4*

## ՅԱՆՈՒՆ ԱՒԵԼԻ ԼԱՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔՈՒԷԱՐԿԵՆՔ ՅՕԳՈՒՏ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻ

Միացեալ Նահանգներու ժողովուրդը կը պատրաստուի ուղղուելու քուէատուփ՝ մասնակից դառնալու համար պատմական նկատուող նախագահական ընտրութիւններու:

Ամերիկացիներու առջեւ կայ երկու յստակ ուղղութիւն՝ դէպի յառաջ նայող ու փոփոխութիւն խոստացող Դեմոկրատ Պարաք Օպաման եւ Ճորճ Պուշի ձախող քաղաքականութեան շարունակութիւնը նկատուող Հանրապետական Ճոն Մէքքէյնը:

Մեզ՝ հայերուս համար, ընտրութիւնը դժուար պէտք չէ ըլլայ: Ամերիկահայութիւնը շահաքրքրող հարցերու շուրջ Օպամայի յանձնառու կեցուածքը ծանօթ է բոլորիս: Ծերակուտական Պարաք Օպամա եւ փոխնախագահի թեկնածու Ճօ Պայտըն միշտ եղած են թունդ պաշտպաններ՝ Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու սերտացման: Ծերակուտական Պայտըն տասնամեակներու ընթացքին եղած է Ամերիկահայութեան վստահելի բարեկամը ու անխոնջ պաշտպանը՝ Հայկական Ցեղասպանութեան բանաձեւերուն: Նոյնը կը խոստանայ ընել Պարաք Օպամա:

Ամերիկահայութիւնը յուզող հարցերու կողքին, մենք կը հաւատանք որ, Պարաք Օպամա ունի յստակ ծրագիր՝ լուծելու երկրի առջեւ ծառացած տնտեսական ու քաղաքական բազմաթիւ խնդիրները: Միացեալ Նահանգներու դիմագրաւած այժմու տնտեսական հսկայ տագնապը կ'սպառնայ մեզմէ իւրաքանչիւրի բարեկեցութիւնը:

Օպամա ատակ է նաեւ վերականգնելու Երկրի հեղինակութիւնն ու վարկը՝ արտաքին աշխարհի առջեւ:

Նախընտրական արշաւի երկար ամիսներու ընթացքին Պարաք Օպամա եկաւ ցոյց տալու որ, ինք ունի մտաւորական բարձր գիտելիքներ, անհատական բարեմասնութիւններ եւ սկզբունքային կեցուածքներ, որոնք զինք կը դարձնեն արժանի՝ վարելու Միացեալ Նահանգներու նախագահի դժուար եւ պատասխանատու պաշտօնը:

Յառաջիկայ Երեքշաբթի կը սպասուի բուռն պայքար եւ շատ մօտ ընտրութիւններ: Կոչ կ'ընենք մեր ընթերցողներուն, որպէսզի գործնական մասնակցութիւն բերեն այս ընտրութիւններուն եւ Նոյեմբերի 4-ին իրենց ձայնը տան Օպամա-Պայտըն ցանկին:

«ՄԱՍԻՍ»

## ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԱԾ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՓԱՍՏՈՂ ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ԲՆՕՐԻՆԱԿԸ



*Նոր յայտնաբերուած նկարը ցոյց կու տայ կոտորածներու ընթացքին հրկիզուած հայկական գիւղերու բնակիչներու մասունքները*

*Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի կողմէ տարուող հետազօտական եւ հաւաքական աշխատանքներու արդիւնքով արձանագրուեցաւ ուշագրաւ նոր բացայայտում: Վերջին ձեռքբերումը Հայոց Ցեղասպանութեան առնչուող խիստ կարեւոր լուսանկարի մը բնագրի յայտնաբերումն է:*

*Լուսանկարն առնուած է 1915 թուականին Կովկասեան ճակատի վրայ, ռուս զինուորականի մը կողմէ: Այն կը ներկայացնէ Մուշի շրջանին մէջ տեղի ունեցած կոտորածներու ընթացքին հրկիզուած հայկական գիւղերու բնակիչներու մասունքները:*

*Լուսանկարը եզակի է: Այն 1917 թուականին Թիֆլիսի մէջ հրատարակուած «Գաղթականական ալպոմի» լաւ պահպանուած լուսանկարներէն մէկն է: Ալպոմը բաղկացած է 62 բացառիկ լուսանկարներէ, որոնք կը ներկայացնեն հայերու դէմ իրագործուած մաս-*

*Շար.ը էջ 19*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ս. ՍԱՐԳՍԵԱՆԸ ԸՆԴԴԷՄ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ

Ո՛չ Հայաստանի նախագահի նստավայրից եւ ո՛չ էլ ՀՀ ԱԳ նախարարութիւնից այդպէս էլ որեւէ արձագանք չհնչեց Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիւլի՝ արած յայտարարութեան կապակցութեամբ: Ամերիկացի լրագրողների հետ հանդիպման ժամանակ Գիւլը յայտարարել էր, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացում Թուրքիայի միջնորդութեան առաջարկի հեղինակը ոչ թէ ինքն է, այլ Սերժ Սարգսեանը: Գիւլը ասել էր նաեւ, որ Երեւան կատարած իր այցի ժամանակ Սերժ Սարգսեանն առաջարկել է, որպէսզի Թուրքիան միջնորդի դեր ստանձնի ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում: Եւ այն փաստը, որ պաշտօնական Երեւանը չհերքեց այս յայտարարութիւնը, հիմք է տալիս արձանագրելու, որ հենց այդպէս էլ եղել է: Ու, փաստօրէն, ստացւում է, որ Սերժ Սարգսեանը նախ խնդրում է, որպէսզի Թուրքիան միջնորդ լինի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, նրա այս խնդրանքն այնուհետեւ գործնական բնոյթ է ստանում՝ Նիւ Եորքում Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի ԱԳ նախարարների հանդիպման տեսքով, ապա այդ ամենից մօտ մէկ ամիս անց Սերժ Սարգսեանը համաձայնում է, որպէսզի ղարաբաղեան հակամարտութեան հարցում միջնորդ լինի ոչ թէ Թուրքիան, այլ Ռուսաստանը: Ներկայումս նախապատրաստւում է Մոսկուայում Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը ԼՂ հակամարտութեան հարցով: Եթէ Սերժ Սարգսեանն ուզում էր, որպէսզի ղարաբաղեան բանակցութիւններն ընթանան Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան ձեւաչափով, ապա նա չէր դիմի Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիւլին՝ առաջարկելով, որպէսզի Թուրքիան միջնորդի դեր ստանձնի, այլ կը դիմէր Դմիտրի Մեդվեդեւին եւ կ՛առաջարկէր, որ Ռուսաստանը լինի այդ միջնորդը: Սակայն տեղի է ունեցել ուղիղ հակառակը, եւ այսօր լուրջ վտանգի տակ է Գիւլին Սերժ Սարգսեանի արած առաջարկութիւնը, այսինքն՝ ԼՂ հարցով Թուրքիայի միջնորդական դերակատարութիւնը: Այս ամէնը, սակայն, մէկ այլ կարեւոր հարթութիւնում էլ է պէտք դիտարկել. խօսքը ղարաբաղեան հակամարտութեան մէջ արդէն աւելի քան 10 տարի միջնորդական առաքելութիւն իրականացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափի մասին է: Եթէ Սերժ Սարգսեանը Գիւլին առաջարկում է միջնորդ լինել Ղարաբաղի հարցում, ապա նա ուղղակիօրէն հարուած է հասցնում Մինսկի խմբի ձեւաչափին: Եթէ Ռուսաստանի նախագահն է իր հովանաւորութեամբ բանակցութիւններ կազմակերպում Մոսկուայում, ապա նա առաւել վտանգաւոր հարուած է հասցնում Մինսկի խմբի ձեւաչափին: Եւ այժմ արդէն կարելի է հանգիստ արձանագրել, որ ԵԱՀԿ ՄԻնսկի խմբի միջնորդութեամբ ղարաբաղեան բանակցութիւններն անցեալ են: Ի դէպ, ՄԽ նախագահող Ֆրանսիայի ջանքերով փորձ է արւում փրկել Մինսկի խումբը վերջնական փլուզումից: Նախօրէին ՄԽ ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիէն յայտարարել էր, որ եկող շաբաթ ՄԽ համանախագահները կ՛այցելեն տարածաշրջան: Ֆասիէն նաեւ արտայայտուել էր Մոսկուայում սպասուող հանդիպման մասին: Երէկ, սակայն, Բեռնար Ֆասիէն յայտարարել է, որ համանախագահների այցը անորոշ ժամանակով յետաձգուել է: Ու թէեւ ֆրանսիացի համանախագահն այդ յետաձգումը պայմանաւորել է համանախագահների աշխատանքային գրաֆիկով, այնուամենայնիւ, լուրջ հիմքեր կան մտածելու, որ իրական պատճառները շատ աւելի լուրջ են եւ խորքային: Նշենք միայն, որ Բեռնար Ֆասիէն ՄԽ 3 համանախագահներից միակն է, որ խօսել է Մոսկուայում սպասուող հանդիպման մասին՝ ասելով, որ այդ գաղափարը դեռ պէտք է քննարկել: ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի ներկայացուցիչները ոչ մի խօսք չեն ասել այդ մասին: Պէտք է ենթադրել, որ յաջորդ շաբաթ, այսինքն՝ մինչ Մոսկուայում նախատեսուած 3 նախագահների հանդիպումը, տարածաշրջան այց կատարելու գաղափարը նոյնպէս Ֆրանսիայինն է: Այսինքն՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահող Ֆրանսիան փորձ է արել ՄԽ կենսունակութիւնը պահպանելու ուղղութեամբ քայլ անել: Եւ այն, որ այցը յետաձգուել է, առնուազն նշանակում է, որ այս հարցում Ռուսաստանն ու ԱՄՆ-ն համաձայնութեան չեն եկել: Իսկ Ֆրանսիայի առաջարկի իմաստը հետեւեալն էր՝ մինչ Մոսկուայում սպասուող հանդիպումը փորձել վերականգնել ԵԱՀԿ ՄԽ գործունէութիւնը, որի արդիւնքում հնարաւոր կը լինէր նաեւ կանխել այդ հանդիպումը, ասել է թէ՝ Մինսկի խմբին փրկել հնարաւոր կործանումից: Նշենք նաեւ, որ վերջին անգամ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները երեքը միասին տարածաշրջան են այցելել Յունիսի վերջին: Դրանից յետոյ բազմիցս այց է կատարել ամերիկացի համանախագահ Մեթիւ Բրայզան, մէկ-երկու անգամ էլ՝ ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիէն:

Ռուսաստանի Պետդումայի ԱՊՀ հարցերով յանձնաժողովի նախագահ Կոնստանտին Զատուլինը նախօրէին յայտարարել է, որ «արդէն վաղուց մշակուել է ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման փաթեթ, որը նախատեսում է ԼՂՀ անկախութեան ճանաչում եւ գրաւեալ եօթ շրջանների վերադարձ»: Մինչդեռ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն իր պաշտօնամուտի արարողութեան ժամանակ յայտարարել է, որ «Լեռնային Ղարաբաղը երբեք անկախ չի լինի, Ադրբեջանը երբեք այն չի ճանաչի՝ ո՛չ հինգ, ո՛չ տասը, ո՛չ էլ քսան տարի անց»:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

# ՉԼՆՈՂ ԲԱՆ

Յայտնի խօսք կայ՝ եթէ ուզում ես ինչ-որ գործ տապալել՝ յանձնաժողով ստեղծիր: «Մարտի 1»-ի գործով խորհրդարանական յանձնաժողովի ստեղծումը շատ յարմար տեղաւորւում է այդ տրամաբանութեան մէջ: Ու եթէ ամիսներ առաջ՝ յանձնաժողովի ձեւաւորման օրերին, դեռ ինչ-որ կասկածներ կային, թէ դրա գործունէութիւնը, վատ թէ լաւ, այնուամենայնիւ, ինչ-որ լոյս կը սփռի մարտեան ողբերգութեան յանգամանքների վրայ, ապա այժմ, երբ յանձնաժողովի գործունէութեան ժամկէտը երկարաձգուեց եւս չորս երկար ու ձիգ ամիսներով, թերեւս ամենաանուղղելի լաւատեսների համար էլ պարզ դարձաւ, որ հարցը փակուղում է ու այնտեղ էր ի սկզբանէ:

Եթէ մի պահ վերանալու լինենք ամենասկզբում նշած նախապաշարմունքից, պէտք է փաստենք, որ աշխարհում սովորաբար խորհրդարանական նման յանձնաժողովներ ստեղծւում են երկու պարագայում: Առաջինը՝ երբ հասարակութիւնը չի վստահում իրաւապահ մարմիններին, եւ երկրորդ՝ երբ խնդիրն անմիջականօրէն առնչւում է ազգային անվտանգութեանը:

Օրինակ, ժամանակին նման մի յանձնաժողով ստեղծուեց ԱՄՆ Սենատում՝ քննարկելու համար Սեպտեմբերի 11-ի աննախադէպ ահաբեկչութեան հանգամանքները: Հասկանալի է, որ Միացեալ Նահանգներում իրաւապահների նկատմամբ վստահութեան հարց կամ չկայ, կամ եթէ նոյնիսկ կայ, այն առնուազն համեմատելի չէ Հայաստանի հասարակութեան տրամադրութիւնների հետ: Համաձայնենք՝ այնտեղ խնդիրը բոլորովին այլ էր, եւ յանձնաժողովը, իսկապէս, վիթխարի աշխատանք ունէր կատարելու, ինչը, ի դէպ, ոչ թէ հակադրուելու էր իրաւապահների գործունէութեանը, այլ հակառակը՝ լրացնելու էր այն:

Բոլորովին այլ է մեր պարագան: Մարտիմէկեան յանձնաժողովը ամիսներ շարունակ ճգնում է (կամ ձեւացնում է, թէ ճգնում է) բացայայտելու համար մի բան, որը, եթէ օգտուելու լինենք Ռոբերտ Քոչարեանի լեքսիկոնից, կարելի էր պարզել «սովորական ուչաստկովիի» մակարդակով: Բայց քանի որ, ինչպէս արդէն նշեցինք, հասարակութիւնը «ուչաստկովիներին» չի վստահում, գործին ձեռնամուխ եղան ուսեալ ու ժողովրդի ցաւով մտահոգ յանձնաժողովականները: Վերջիններս, սակայն, մինչ այսօր չեն գտել մի քանի տարրական հարցերի պատասխաններ: Դրանք են՝ 1/ եղե՞լ է արդեօք ցուցարարների վրայ կրակ բացելու հրաման, թէ՞ չի եղել, 2/ եթէ այո, ապա ո՞վ է տուել այդ հրամանը, 3/ եթէ ոչ, ապա ի՞նչ հրահանգաւորման հիման վրայ է կրակ բացուել, 4/ ովքե՞ր են եղել անմիջական կրակողները, 5/ որքանո՞վ էին ցուցարարները «վտանգաւոր», որ անհրաժեշտ էր նրանց «վաստակել» կրակի տակ յայտնուելու «իրաւունքը», 6/ մարդո՞ւ, թէ՞ կենդանու են պատկանում դէպքի վայրում գտնուած ոսկորները:

Անցել է մօտ 7 ամիս, եւ այս հարցերից ոչ մէկը պատասխան չունի: Ո՞րն է երաշխիքը, որ լրացուցիչ 4 ամիսը կը տայ դրանք գտնելու հնարաւորութիւնը: Գուցէ այս նոր՝ փաստահաւաք խո՞ւմբը կ՛օգնի անել այդ բանը: Խիստ կասկածելի է:

«ԱՌԱՒՕՏ»

# ՅՈՅՍԵՐԻ ՈՒ ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ուղիղ մէկ տարի առաջ ասպարէզ իջած Լեւոն Տէր-Պետրոսեանը կեանքից դժգոհ մեծ խումբ մարդկանց յոյս ներշնչեց, որ ամէն ինչ լաւ է լինելու՝ մի քանի ամսուայ անխոնջ պայքարի արդիւնքում ինքն ու իր թիմը կը գան իշխանութեան, երկիրը եւ ժողովուրդը կ՛ազատուի ատելի դարձած «ղարաբաղեան լծից», կեանքը կը դառնայ ուրախ ու լուսաւոր: Այս հեռանկարը շատերին ոգեւորեց, անգամ՝ նրանց, ովքեր ամիսներ առաջ Լեւոնի անունը լսել նոյնիսկ չէին ուզում: Տէր-Պետրոսեանն ու իր թիմը մարմնաւորեցին իշխանափոխութեան ուրուականը, որը շրջում էր երկրում՝ ահուսարսափի մատնելով իշխանութեան կերակրատաշտի մօտ կանգնածներին: Օրէց օր յոյսը մեծանում էր, վաղուայ օրն աւելի տեսանելի, թշնամին՝ աւելի անզօր ու պարտուած երեւում: Այսօր այդ հեռանկարով մէկ տարի ապրած մարդիկ բոլորովին այլ զգացումներ ունեն: Նրանց մի մասը յուսահատուած է, միւսները՝ խռոված, երրորդները փորձում են իրենք իրենց ու շրջապատին ոգեշնչել եւ տխուր մտքերին չտրուել: Հիասթափութիւն ապրողների մի մեծ հատուած այժմ մեղադրում է Տէր-Պետրոսեանին, նրա ռազմավարութեան եւ մարտավարութեան մէջ վրիպումներ ու սխալներ փնտռում: Միւսները փորձում են հասկանալ ու մեղքը առաջնորդի վրայ չբարդել: Ամէն դէպքում՝ մարդիկ տխուր են, եւ յաղթանակի մէջ համոզուածների քանակը գնալով նուազում է: Լեւոն Տէր-Պետրոսեանին մեղադրողները դժուարանում են ասել, թե ինչ կ՛անէին, եթէ նրա փոխարէն լինէին: Մարդիկ ուզում են, որ իրենց առաջնորդն ունենայ բոլոր հարցերի պատասխանները եւ ամենանեղ իրավիճակից անգամ ելքեր գտնի: «Բայց չէ որ մենք նրան հաւատացել ենք ու մեր աներկբայ սէրն ու նուիրումը բերել նրան»,- ասում են նրանք՝ վստահ, որ դա լիովին բաւական է գերմարդ լինելու եւ անհնարինը հնարաւոր դարձնելու համար:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES: USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail) Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ԿԱՐԵՒՈՐ Է ՀԱՄԱՐՈՒՄ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՓԱՍՏԱՀԱՒԱՔ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:* Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանը կարեւոր է համարում ընդդիմադիր քաղաքական ուժերի մասնակցութիւնը Մարտի 1-ի իրադարձութիւններն ուսումնասիրելու համար կազմաւորուելիք փաստահաւաք խմբի աշխատանքին:



Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեան

Երկուշաբթի օրը լրագրողների հետ հանդիպմանը Հայաստանի օմբուդսմենը, ի պատասխան լրագրողի հարցին, թէ կը շարունակի՞ աշխատել խմբի կազմում, եթէ ընդդիմութիւնը հրաժարուի մասնակցել դրա աշխատանքին, պատասխանեց. - «Կը շարունակեմ, բայց արդէն սա այն ձեւաչափը չի լինի, ինչի համար որ դա ստեղծուել էր»:

«Ես չեմ ցանկանում քաղաքական ուժերին գնահատական տալ, բայց, իմ խորին համոզմունքով, չի կարելի պատասխանատուութիւն ստանձնել միայն այն պայմաններում, երբ քեզ համար իտէալական պայմաններ են ստեղծուած», - յաւելեց նա՝ շարունակելով. - «Մանաւանդ՝ երբ քաղաքական անհանդուրժողականութեան որոշակի մթնոլորտ կայ»:

Նա, իր խօսքով, համադրել է նման խումբ դրական եւ բացասական կողմերը, եւ գտնում է, որ «դրականը բաւարար է այդ գործընթացում ներգրաւուելու համար». - «Դրականը բաւարար չէ վստահ լինելու համար, բայց բաւարար է փորձ անելու համար»:

«Կան ռիսկային գործօններ», - շարունակեց նա, - «բայց պէտք է գիտակցել պատասխանատուութեան աստիճանը: Քաղաքական անհանդուրժողականութեան պայմաններում իտէալական որոշումներ հնարաւոր չէր եւ սպասել»:

Արմէն Յարութիւնեանի խօսքով, խմբի նկատմամբ «վստահութեան բարձր մակարդակ է ապահովում դրա ստեղծուած ձեւաչափը»:

Ինչ վերաբերում է գործընթացի գաղտնիութեանը, ապա, ըստ օմբուդսմենի, այդ ունի նաեւ իր դրական կողմերը. - «Առաջինը, նրա զեկոյցը լինելու է հրապարակային: Երկրորդը՝ պաշտպանուած է յատուկ կարծիքի իրաւունքը. այսինքն՝ փոքրամասնութիւնը հնարաւորութիւն է ունենալու իր յատուկ կարծիքը ներկայացնել: Զափազանցուած եմ համարում այն հանգամանքները, որ այդ գաղտնիութեան պայմաններում խմբի անդամների վրայ կարող է ճնշում գործադրուել»:

Փաստահաւաք խմբի ստեղծումը Յարութիւնեանը իշխանութիւն-ընդդիմութիւն երկխօսութեան ծաւալմանն ուղղուած իրական քայլ է համարում. - «Իրօք կէտեր կան, որոնք ցոյց են տալիս, որ, այնուամենայնիւ, այստեղ գործընթաց կայ: Մինչեւ այս որեւէ լուրջ քայլ ես չեմ տեսել»:

Արմէն Յարութիւնեանը համարում է, որ փաստահաւաք խումբը ուշացած է ստեղծւում, սակայն չի գտնում, որ դա փաստարկ է խմբի աշխատանքը բոյկոտելու համար:

# ՄՈՒՇԵՂ ՍԱՂԱԹԷԼԵԱՆԸ ԱԶԱՏԱԶՐԿՈՒԵՑ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:* Կալանավայրերի վարչութեան նախկին պետ, Նախագահի վերջին ընտրութիւններում Լեւոն Տէր-Պետրոսեանի վստահուած անձ Մուշեղ Սաղաթէլեանը դատապարտուեց 5 տարի ազատազրկման:



Մուշեղ Սաղաթէլեան դատարանի դահլիճէն ներս

Երեւանի քրէական դատարանի դատաւոր Մնացական Մարտիրոսեանը նրան մեղաւոր ճանաչեց ՀՀ Քր. Օր. 316 յօդուածի 1-ին եւ 2-րդ մասերով՝ իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութիւն գործադրելու, 235 յօդուածի 4-րդ մասով՝ սառը զէնք՝ դանակ պահելու համար:

Բացի այդ դատարանը նրան պարտաւորեց վճարել նաեւ 900 հազար դրամ գումար:

Ի դէպ, Մնացական Մարտիրոսեանը այն նոյն դատաւորն է, ով «Առագաստ» սրճարանում տեղի ունեցած սպանութեան համար Ռոբերդ Քոչարեանի թիկնապահին պայմանական անազատութիւն էր արժանացրել:

Մուշեղ Սաղաթէլեանին ներկաները ծափողջոյններով դիմաւորեցին: Իսկ մինչ վճռի հրապարակումը «Մարտի 1-ի» գործով ամբաստանեալ Մուշեղ Սաղաթէլեանը ասաց, որ չի հաւատում արդարացման վճռի. «Ինչքան էլ տան, չափանիշ չի: Ես անմեղ եմ»: Վճիռը հրապարակելուց յետոյ ներկաները սկսեցին գոչել. «Ամօթ, ամօթ», ինչպէս նաեւ. «Պայքար, պայքար, մինչեւ վերջ»:

Դատավճիռը լսելու էր եկել նաեւ Մարտի 1-ի խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովի անդամ Արամ Յարութիւնեանը: «Կարծում եմ, որ նրանք պէտք է դիմեն վերաքննիչ դատարան: Անարդար դատավճիռ էր: Համոզուած եմ, որ դատարանը լրիւ ապացուցողական նշանակութիւն չունեցող փաստեր էր հաշուի առել»,-ասաց նա վճիռն իմանալուց յետոյ:

# «ԲՋՆԻ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* «Բջնի» հանքային ջրերի գործարան» ընկերութիւնը ներկայումս զրկուած է աշխատելու հնարաւորութիւնից: Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց ընկերութեան շահերի ներկայացուցիչ Արա Զոհրաբեանը, «առգրաւուել են ընկերութեան բոլոր տրանսպորտային միջոցները, այս պահին ընկերութեան 480-ից աւելի աշխատակիցներ հարկադիր պարապուրդի են մատնուած, կապարակնքուած են բոլոր պահեստները, եւ սկսուել է ընկերութեան գոյքի աճուրդային գործընթացը»:

Հոկտեմբերի 10-ին վարչական դատարանը՝ դատաւոր Լարիսա Սոսեանի նախագահութեամբ, վճիռ է կայացրել «Բջնի» հանքային ջրերի գործարան» ընկերութիւնից աւելի քան 4 միլիարդ դրամ բռնագանձելու մասին: Իսկ Հոկտեմբերի 23-ին արդէն, ինչպէս յայտնեց Արա Զոհրաբեանը, արդարադատութեան նախարարութեան դատական ակտերի հարկադիր կատարման ծառայութեան աշխատակիցները, առանց համապատասխան որոշման, սեւ համազգեստներով եւ դիմակաւորուած անձանց հետ, ներխուժել են «Բջնի» գործարան:

Ինչպէս փաստաբանի, այնպէս էլ «Սիլ» կոնցեռնի ներկայացուցիչների պնդմամբ՝ Սուքիասեան ընտանիքին պատկանող կամ նրա հետ համագործակցող կազմակերպութիւնների նկատմամբ «յատուկ» ուշադրութիւնը եւ, ըստ իրենց՝ ապօրինի ստուգումները սկսուել են անցեալ տարուայ Սեպտեմբերի 21-ից յետոյ, երբ Սուքիասեան եղբայրները իրենց զօրակցութիւնը յայտնեցին նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին:

Արդէն մի քանի ամիս է, ինչ դատարանում քննւում է «Պիցցա դի Ռոմա» սրճարանի երեք աշխատակիցների գործը: 2007 թուականի Նոյեմբերից էլ սկսուել են ստուգումները «Բջնի» գործարանում, ինչի արդիւնքում քրէական գործ է յարուցուել:

Փաստաբան Արա Զոհրաբեանի վկայութեամբ՝ յարուցուած գործի շրջանակներում մի քանի անձինք գտնւում են հետախուզման մէջ, կալանաւորուել էր ընկերութեան գլխաւոր տնօրէնը, որը, սակայն, հետագայում ազատ է արձակուել. - «Միակ պրոբլեմը, որ յետոյ իրենք այստեղ ունեցան՝ Հարկային Պետական Ծառայութեան քննչական բաժինը, այն էր, որ յետոյ հասկացան, որ բնօգտագործման վճարը մեր օրէնքով չի համարւում պարտադիր վճարի տեսակ»:

«Սիլ» կոնցեռնի նախագահ, Ազգային Ժողովի պատգամաւոր Խաչատուր Սուքիասեանը ներկայումս հետախուզման մէջ է Մարտի 1-2-ի դէպքերի կապակցութեամբ յարուցուած քրէական գործով:

# ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏԵԱՆ. «ՉԵՄ ԲԱՑԱՌՈՒՄ, ՈՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԻՐ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՐՏԱԴՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻՆ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:* «Ես չեմ բացառում, որ Ռուսաստանը ամենամօտ ապագայում, իրեն բնորոշ շատ բիրտ, ուժային մեթոդներով, իր որոշումը պարտադրի հայկական կողմին՝ իր իսկ նախընտրած սցենարով Ղարաբաղի հարցը լուծելու համար», - շաբաթ օրը կայացած ասուլիսի ժամանակ յայտարարեց ազգագրագէտ Հրանուշ Խառատեանը:



Հրանուշ Խառատեան

Այդպիսի մեթոդ, ըստ նրա, կարող է լինել, օրինակ, կարճատեւ պատերազմը. - «Չէի ուզենայ ասել, որ միանշանակ՝ հենց անպայման Ռուսաստանը, դա կարող է ադրբեջանական զօրքի միջոցով լինել: Բայց խնդրի հրահրողը, ծրագրաւորողը՝ լուծումը եթէ պատերազմական ընթացքով լինի, ես, միանշանակ, Ռուսաստանն եմ տեսնում»:

«Եւ այս կոնտեքստում ինձ համար բոլորովին զարմանալի չէ, որ հիմա, չնայած բոլոր յայտարարութիւններին, որ Ղարաբաղի խնդրի լուծումը Մինսկի խմբինն է, որ միայն այդ ճանապարհով պէտք է գնա եւ այլն, այսօր Ռուսաստանը միայնակ խնդրի լուծումը վերցրել է իր վրայ եւ, կարծէք թէ, մեր երկիրը համաձայնել է, որ այդ ճանապարհով գնան»:

Անդրադառնալով ներքաղաքական իրավիճակին եւ, մասնաւորապէս, Մարտի 1-ի իրադարձութիւնների հետ կապուած փաստահաւաք խմբի ստեղծմանը, Հրանուշ Խառատեանը ասաց. - «Ինքնին արդէն այս փաստահաւաք խմբի [մասին] դեռ այն ժամանակուայ որոշումը վկայում էր, որ մեր երկրում չկայ բացարձակ որեւէ վստահութիւն դատարանի եւ քննչական մարմինների նկատմամբ

Ընդհանրապէս, ազգագրագէտի համոզմամբ, «Մարտի 1»-ը հայաստանեան հասարակութեան կեանքում ոչ թէ ինչ-որ բան փոխեց, այլ եկաւ ամրագրելու ու աւելի ընդգծելու նախկինում եղած վատ վիճակը. - «Մարտի 1»-ը զգալի շեշտադրումներ ամրացրեց՝ չփոխեց, այլ ամրացրեց: Կարծում եմ, որ «Մարտի 1»-ով լրացուցիչ կարծէք մի խթան ստացաւ այն իրավիճակը, որ մեր մօտ անուանում ենք ռեժիմային»:

Հանրահաւաքները դադարեցնելու՝ Հայ Ազգային Կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի որոշման վերաբերեալ Խառատեանի գնահատականը բացասական է. այդպիսով, ըստ նրա, Տէր-Պետրոսեանը ներկայիս իշխանութիւններին հնարաւորութիւն տուեց Ղարաբաղի հարցը լուծել իր համար ընդունելի՝ 1998 թուականի իշխանափոխութեան ժամանակներում շրջանառուող տարբերակով:

## ԼՈՒՐԵՐ

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ԵՐԵՔ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ Է ՄԱՏՆԱՆՇՈՒՄ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Տեւական պասիւ ժամանակաշրջանից յետոյ ղարաբաղեան խնդրի կարգաւորման գործընթացը մտել է ակտիվ փուլ: Այդ մասին յայտարարել է Սերժ Սարգսեանը Հանրային հեռուստաընկերութեանը տուած հարցազրոյցում՝ դա պայմանաւորելով առնուազն երկու կարեւոր հանգամանքով. - «Ե՛վ Հայաստանում, ե՛ւ Ադրպէյճանում աւարտուեցին նախագահական ընտրութիւնները, եւ երկրորդ՝ տարածաշրջանում տեղի ունեցած յայտնի իրադարձութիւնները մէկ անգամ եւս բոլորին համոզեցին, որ խնդրի կարգաւորման ռազմական ճանապարհ գոյութիւն չունի»:*

*«Ղարաբաղեան խնդրի կարգաւորումը հնարաւոր է, եթէ Ադրբէջանը ճանաչի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը, եթէ Լեռնային Ղարաբաղը ցամաքային սահման ունենայ Հայաստանի Հանրապետութեան հետ, եւ եթէ միջազգային կազմակերպութիւններն ու առաջատար երկրները երաշխաւորեն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգութիւնը», - ընդգծել է Հայաստանի նախագահը:*

*Ղարաբաղեան հարցում տարածաշրջանային այլ դերակատարների ակտիւացմանը վերաբերող հարցին Հայաստանի նախագահը արձագանքել է. - «Նախ, պէտք է ասեմ, որ ղարաբաղեան կարգաւորման գործընթացն ընթանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում՝ «մադրիդեան սկզբունքների» հիման վրայ: Բազմիցս ասուել է, եւ հիմա էլ կրկնում եմ, որ այլ միջնորդներ չկան. միակ միջնորդները ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն են, եւ այն խառնաշփոթը, որ փորձ է արւում ստեղծել, մեզ որեւէ բանում չի օժանդակում: Կրկնում եմ՝ միակ միջնորդը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն են, Հայաստանը երբեք որեւէ երկրի չի դիմել՝ միջնորդական առաքելութիւն իրականացնելու խնդրանքով»:*

*Ռուսաստանի Նախագահ Դմիտրի Մեդվեդեւի՝ երեք նախագահների հանդիպման նախաձեռնութեան առնչութեամբ Սերժ Սարգսեանն ասել է. - «Ռուսաստանը հանդիսանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներից մէկը, եւ շատ օրինաչափ է նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հրաւէրն ու նրա ակտիւութիւնն այս հարցում»:*

*Իսկ Թուրքիայի Նախագահ Աբդուլլա Գիւլի յայտարարութեան վերաբերեալ, թէ Հայաստանի նախագահն է առաջինն իրեն խնդրել աջակցել կարգաւորման գործընթացին, Սերժ Սարգսեանը նշել է. - «Նախ պիտի ասեմ, որ, երեւի նկատել էք, ես բնաւորութիւն չունեմ այլ գործիչների ասածները մեկնաբանել, յատկապէս որ, մեր մամուլում տպագրւում են կոնտեքսից կտրուած հատուածներ: Իրականութիւնը հետեւեալն է՝ միակ միջնորդները ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն են, իսկ որեւէ օժանդակութիւնից մենք չենք հրաժարւում: Այո, համոզուած եմ, որ Թուրքիան կարող է իր օժանդակութիւնը բերել ղարաբաղեան խնդրի կարգաւորման գործընթացին, եւ հիմա էլ, կարծում եմ, բերում է. Նախագահ Գիւլի այցելութիւնը Երեւան, հայ-թուրքական բանակցութիւնների շարունակութիւնը շատ լաւ օրինակ է դժուար խնդիրներ լուծելու: Եւ վստահ եմ, եթէ Թուրքիան բացի սահմաններն ու Հայաստանի հետ հաստատի դիւանագիտական յարաբերութիւններ, մեծապէս օժանդակած կը լինի ղարաբաղեան խնդրի կարգաւորմանը»:*

*«Խորապէս համոզուած եմ, որ մենք դեռեւս թեւակոխելու ենք շատ աւելի ակտիվ հասարակական քննարկումների ժամանակաշրջան», - ասել է Նախագահը՝ յաւելելով. - «Քննարկումները միշտ օգտակար են, բայց դրանց հիմքում միայն ու միայն մէկ շահ պէտք է լինի՝ հայ ժողովրդի շահը: Մենք ղարաբաղեան խնդրի կարգաւորմանը չափազանց շատ բան ենք նուիրաբերել, որպէսզի աչք փակենք կամ չնկատելու տանք շահարկումների փաստերը: Մենք նուիրական հարց ենք լուծում: Մենք կարեւոր պատմական խնդիր ենք լուծում, եւ այս պատմական խնդրի լուծման ընթացքում, եթէ որեւէ մէկը, փորձում է այլ շահ փնտռել, ապա դա բարոյական չէ»:*

*Սերժ Սարգսեանը յայտարարել է նաեւ, որ «մեր բանակը մարտունակ է, այն այսօր աւելի մարտունակ է, քան երէկ էր, եւ երէկ աւելի մարտունակ էր, քան երէկ չէ առաջին օրն էր»: «Ամէն տարի մեր բանակն աւելացնում է իր սպառազինութիւնը, իր մարտունակութիւնը եւ, որ շատ կարեւոր է, մարտական ոգին: Այն մեր բանակի ամենից կարեւոր զէնքն ու սպառազինութիւնն է», - ընդգծել է Հայաստանի նախագահը:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԴԵՐՆ ԸՆԴԴԷՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ




Երեւանի մէջ Քուրդեր կը պահանջեն Աբդուլլա Օջալանի ազատ արձակումը

*Քրդական եւ հայկական դրօշները ծածանելով՝ Օջալանի պատկերով դրօշներ իրենց վրայ փաթթած մի քանի տասնեակ քրդեր Հոկտեմբեր 28-ին բողոքի ակցիա էին անցկացնում Շահումեանի արձանին յարակից հրապարակում: Նրանք պահանջում էին ազատել Քրդական բանուորական կուսակցութեան նախագահ Աբդուլլա Օջալանին:*

*«Մենք Թուրքիայից պահանջում ենք Օջալանի ազատութիւնը: Դատապարտում ենք թուրքերին այդ ահաբեկչութեան համար, որ մեր Օջալանին այդպէս տանջամահ են անում: Քանի դեռ մեր մէջ մի կաթիլ արիւն կայ, մենք պայքարելու ենք յանուն նրա, յանուն մեր ազատութեան»,- ասաց Սեւիլ Ամոյեանը:*

*«Շուրջ 10 տարի քուրդ ժողովրդի առաջնորդ Օջալանը միջազգային մի դաւադրութեամբ յայտնուել է Իմրալիի բանտում, ուր ենթարկուել է խոշտանգումների, անմարդկային ու նուաստացնող վերաբերմունքի: Վերջին շրջանում սաստկացել են սպառնալիքները, թէ պատրաստ են նրան ֆիզիկապէս ոչնչացնել: Թուրքիան որպէս պետութիւն չի տարբերւում այդ բանտից: Այս անգամ բռնութիւններն ու բռնարարքներն ուղղուած են ոչ միայն անհատին, այլ պատանդի կարգավիճակում յայտնուած քուրդ ժողովրդին, որը ոտքի է ելել խաղաղ միջոցներով պաշտպանելու իր առաջնորդին՝ հնարաւոր նոր ոտնձգութիւններից»,- ասաց ցոյցին մասնակից Էմիջ Էլյանը:*

*Ցուցարարները երթով շարժուեցին դէպի ՄԱԿ-ի գրասենեակ, ուր յանձնեցին Հայաստանի քրդական ազգային խորհրդի՝ «Քուրդիստան» կոմիտէի յայտարարութիւնը:*

*«Կոչ ենք անում աշխարհի առաջադէմ մարդկութեանը, պետութիւններին ու միջազգային կառոյցներին միաւորել բոլոր ուժերը եւ Թուրքիայում հաստատել ժողովրդավարական կարգեր, քուրդ ժողովրդի ոչնչացման սպառնալիքը վերացնել եւ ապահովել աշխարհում խաղաղութիւնն ու արդարութիւնը»,- գրուած է յայտարարութեան մէջ:*

# «ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ն ՈՒ ՄԱՐՏԻ 1-Ը ԲԱՑԱՅԱՅՏՈՒԱԾ ԵՆ»

*Շարունակուած էջ 1-էն*

*...թիւն է»:*

*«Իշխանութիւնների կողմից ամէն ինչ արուեց «Հոկտեմբերի 27-ի» դատավարութիւնը չեղելու, ընթացքը խափանելու եւ ոճրագործութիւնը չբացայայտելու համար»,- «Ա1+»-ին ըսաւ ահաբեկչութեան զոհերէն Եուրի Բախշեանի այրին՝ Անահիտ Բախշեան:*

*Անձամբ հետեւելով Հոկտեմբերի 27-ի գործով դատավարութեան ընթացքին՝ տիկին Բախշեան շարք բացայայտումներ կատարած է. «Օրինակ՝ ակնյայտ է, որ դատարանը որպէս վկայ կարող էր հրաւիրել մարդկանց, որոնք լոյս կը սփռէին առանձին դրուագների վրայ: Դատավարութեան ընթացքում պարզուեց, որ Հոկտեմբերի 27-ին ԱԺ էին մտել ոչ միայն այդ 5 ահաբեկիչները, այլեւ այլ անձինք, որոնք տարբեր գրոյցներ են վարել ԱԺ-ի ներսում»:*

*«Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Տիկին Բախշեան բոլորի ուշադրութիւնը հրաւիրեց նաեւ այն փաստին, որ «27»-ի գործով անցնող բազմաթիւ կարեւոր վկաներ դատավարութեան ընթացքին եւ անկէ յետոյ կամ հեռացուեցան երկիրէն, կամ «ինքնասպան» եղան, կամ անոնց հետ դժբախտ պատահարներ տեղի ունեցան. «Այսինքն՝ իշխանութիւններն ամէն ինչ արեցին «Հոկտեմբերի 27-ի» բացայայտումը խոչընդոտելու համար: Հոկտեմբերի 27-ը օրացոյցից պոկելու իշխանութիւնների ջանքերը այնքան ակնյայտ են, որ այսօր ես որեւէ ակնկալիք չունեմ, որ նրանց օրօք գործի բացայայտմանն ուղղուած որեւէ քայլ կը կատարուի»:*

*Վազգէն Սարգսեանի եղբայրը, «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը վստահ է, որ «Հոկտեմբերի 27-ի» ահաբեկչութեան գործով դատավարութիւնը ոչ միայն չէ տուած զոհերու հարազատներուն, այլեւ ողջ հասարակութեանը յուզող հարցերու պատասխանները:*

*Արամ Սարգսեանը համոզուած է, որ ցանկութեան պարագային Հոկտեմբերի 27-ը կը բացայայտուէր. «Ես համոզուած եմ, որ ահաբեկիչի եւ Ռոբերդ Քոչարեանի հանդիպումը ձայնագրուել է, ու չէր կարող չձայնագրուել, հակառակ դէպքում մենք պէտք է արձանագրենք, որ ընդհանրապէս չենք ունեցել Ազգային Անվտանգութիւն: Եթէ այդ ձայնագրութիւնը հրապարակեն, շատ բան կը պարզուէր»:*

*Արամ Սարգսեանը եւս յայտնեց, որ հասարակութիւնը իր համար բացայայտած է Հոկտեմբեր 27-ի ոճրագործութիւնը, այլ հարց է, թէ այդ բացայայտումը որքանով կը համապատասխանէ իրականութեանը:*

*Արամ Սարգսեան ինքն իր համար պարզած է, թէ որոնք կանգնած են ահաբեկիչներու ետեւը, սակայն. «Վերջնական պատասխաններ չեմ կարող տալ, քանի որ իմ խորին համոզմամբ՝ մարդուն սպանութեան մէջ կասկածելը նոյնչափ մեղք է, որքան մարդուն սպաննելը: Դրա համար կ՚ուզենայի, որ բացայայտուեն նաեւ կազմակերպիչները: Ամենից շատ կ՚ուզենայի, որ այն մարդիկ, ում վրայ կասկածում եմ, նրանք չլինէին, պետական մակարդակով չլինէր այդ ոճրագործութիւնը»:*

# ԵՒՐԱՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԱՋԱԿՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆԸ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Հայաստանը ձգտում է աւելի մերձենալ Եւրոպային, կարեւորում է Եւրամիութեան հետ յարաբերութիւնների ընդլայնումը եւ այդ ճանապարհին ակնկալում է Եւրամիութեան աջակցութիւնն ու օժանդակութիւնը: Այս մասին այսօր յայտարարել է Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանը՝ ընդունելով Հարաւային Կովկասում Եւրոպական միութեան յատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբիին:*

*Հանրապետութեան նախագահն ու դեսպան Սեմնեբին խօսել են նաեւ տարածաշրջանային զարգացումների, ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացի, հայ-թուրքական յարաբերութիւնների մասին:*

*Սեմնեբին ողջունել է Հայաստանի Նախաձեռնութիւնը Թուրքիայի հետ յարաբերութիւնները կարգաւորելու ուղղութեամբ եւ ասել, որ Եւրոպական Միութիւնը պատրաստ է աջակցել երկու հարեւան երկրների միջեւ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացին:*

*Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչը բարձր է գնահատել նաեւ Մարտի 1-ի իրադարձութիւնների հետ կապուած փաստահաւաք խմբի ստեղծումը եւ խմբի աշխատանքներին արտախորհրդարանական ընդդիմութեան ներգրաւումը:*

## ԱԶԳԱՅԻՆ

# ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ՞, ԹԷ՞ ԼԻԲԵՐԱԼԻԶՄ

*Ես չգիտեմ, թէ ինչ ասել է պետութեան շահեր:*
*Ես գիտեմ, թէ որոնք են քաղաքացու եւ նրա ընտանիքի շահերը:*

*Մարգարեթ Թետչեր*

**ԼԻՒԴՄԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆ**
**(Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ատենապետ)**

*Ի սկզբանէ պէտք է փաստել, որ Հայաստանի «քաղաքական» համակարգի առանձնայատկութիւններից մէկն էլ այն է, որ հասարակութեան մի ստուար, ես կ'ասէի՝ գերակշիռ յատուածն ուղղակի տեղեակ չէ պետական կառավարման համակարգի հիմնասիւն հանդիսացող գաղափարախօսութիւններից, եւ իր քաղաքական կողմնորոշումների մէջ որոշիչ է հանդիսանում անհատը՝ անկախ այն հանգամանքից՝ լիբերալ է նա, ազգայնական, թէ սոցիալ-դեմոկրատ: Իհարկէ, պէտք է ընդունել, որ այս երեւոյթն ունի իր օբիեկտիւ պատճառները, սակայն մի բան յստակ է. առանց գաղափարախօսութեան կառավարումը հանգեցնում է քաոսի, ինչքան էլ որ անհատը ունի լաւ եւ բարի նպատակներ: Նրա նպատակներն այդպէս էլ մնում են անկատար ցանկութիւն, որովհետեւ քաղաքական գաղափարախօսութիւնն է, որ տալիս է ցանկութիւնների կատարման յստակ ուղեգիծը:*

*1988-1991-ի համազգային շարժումն ու դրան հետեւած այդքան բաղձալի անկախութիւնը բերեցին մի այնպիսի իրավիճակի, երբ հայոց նորանկախ պետութիւնն անցում կատարեց խորհրդային սոցիալիստական, բայց նաեւ տոտալիտար համակարգից դէպի կառավարման լիբերալ ձեւ: Ինչո՞ւ եմ յատուկ նշում սոցիալիստական, բայց տոտալիտար, որովհետեւ մեզնից շատերի մօտ կայ մի այնպիսի մտայնութիւն, որ սոցիալիզմը, իսկ աւելի ճիշդ՝ սոցիալ-դեմոկրատիան ոչ մի տարբերութիւն չունի 70 տարուայ կոմունիստական տոտալիտար համակարգից: Այս խնդիրն էլ առաջանում է նրանից, որ 17-ամեայ մեր պետականութեան օրօք այդպէս էլ հասարակութիւնը չտեսաւ կայացած «ձախ» գաղափարախօսութեան կրող քաղաքական ուժի, որն իր մօտեցումներն ու, յիրաւի, չքնաղագոյն գաղափարախօսութիւնը կարողանար ըստ արժանւոյն մատուցել նրան: Սոցիալ-դեմոկրատիան սխալ ընկալողները, իսկ աւելի ճիշդ՝ այն ուղղակի չհասկացողները առաջ են քաշում մի փաստ, թէ իբր սոցիալ-դեմոկրատիան դէմ է շուկայական յարաբերութիւններին, թէ այն, ի վերջոյ, բերում է կառավարման տոտալիտար համակարգի: Այս յօդուածը խնդիր չունի հասարակութեանը բացատրելու, թէ որն է իրական սոցիալ-դեմոկրատիան, քանզի դրա համար անգամ հատորները կարող էին չբաւականացնել, այլ ընդամէնը ուզում է արձանագրել, թէ ինչ ունենք մենք այսօր 17 տարիների լիբերալ կառավարման արդիւնքում: Աւելին, վերջին 10 տարիները պէտք է անուանել կորսուած հնարաւորութիւնների ժամանակաշրջան: Կորսուած, որովհետեւ ապաշնորհ եւ բիզնեսմէն իշխանութիւններն ուղղակի արհամարհեցին բազմաթիւ հրաշալի եւ արդիւնաւէտ նախագծեր՝ մի դէպքում չհասկանալով դրանցից, մէկ այլ դէպքում էլ սեփական գրպանի շահերից անտեսելով դրանք: Քաւ լիցի, ես խնդիր չունեմ Ձեզ համոզելու, թէ լիբերալիզմը հակազգային կամ հակապետական գաղափարախօսութիւն է, ուղղակի, իսկապէս, տխուր պատկեր է ստացւում լիբերալների միահեծան կառավարման արդիւնքում:*

*Մեր գաղափարախօսութեան հիմքում ընկած է մարդը՝ իր թերութիւններով եւ առաւելութիւններով, անկատար կատարելութեամբ: Ի տարբերութիւն շատ այլ գաղափարախօսութիւնների, մեր դաւանանքի հիմքում ընկած չէ փողը, մենք չենք ընդունում այն որպէս գերակայ արժէք, մեզ համար փողը միջոց է՝ նպատակին հասնելու համար: Իսկ նպատակը հզօր, սոցիալական արդարութիւն ունեցող եւ մարդու իրաւունքների պաշտպան ու ժողովրդավարութեան կղզի Հայաստանն է, որտեղ իւրաքանչիւր մարդ հպարտ կը լինի՝ մեր հայրենիքի քաղաքացի լինելու համար:*

*Եթէ անցնենք աւելի առարկայական եւ փաստացի խնդիրներին, կարող ենք արձանագրել հետեւեալը՝ ոլորտ առ ոլորտ.*

*1. Քաղաքացու սոցիալական պաշտպանուածութեան եւ սոցիալական արդարութեան հաստատման մեխանիզմները ըստ մեզ՝ հնչակեանների*

*Խորհրդային թէկուզ եւ տոտալիտար, բայց սեփական քաղաքացու սոցիալական պաշտպանուածութիւնն ապահովող համակարգից յետոյ նորանկախ Հայաստանի իրար յաջորդող կառավարութիւններն ու կառավարող կուսակցութիւնները մի դէպքում օբիեկտիւօրէն չկարողացան, միւս դէպքում էլ չցանկացան կամ ապաշնորհ գտնուեցին՝ պահելու վերոնշեալ սոցիալական պաշտպանուածութեան տարրերը: Ստեղծուած համակարգը կարողանում է գերազանցապէս անել ընդամէնը մէկ բան. հրաշալի պայմաններ է ստեղծում արտօնեալ օլիգարխների համար՝ աւելի հարստանալու, դէ իսկ աղքատների, կամ աւելի ճիշդ՝ աշխատաւորական զանգուածների համար՝ աւելի եւ աւելի հարստահարուելու ու աղքատանալու: Հեռուստատեսութեամբ օրը երկու անգամ գովազդուող գործարաններում եւ այլ ընկերութիւններում ուղղակիօրէն ոտնահարուած են աշխատաւորների իրաւունքները: Արհամարհելով աշխատանքային օրէնսգիրքը՝ գործատուների մեծ մասը ստիպում է իր ենթակային աշխատել 8 ժամից աւելի: Շատ ժամանակ աշխատողները չունեն անգամ օրինական գրանցում, աշխատանքային գրքոյկ, իսկ բոլոր այս խնդիրների բարձրաձայնման պարագայում ուղղակիօրէն դուրս են շպրտւում իրենց աշխատատեղերից՝ առանց պատշաճ բացատրութիւն ստանալու: Իշխանութիւնները, այս ամէնի վրայ աչք փակելով, խամաճիկացրել են աշխատաւորի վերջին յոյսն ու պաշտպանը՝ արհմիութիւնները: Սրանք, աւանդաբար, ադմինիստրացիայի ընդդիմախօսը լինելու փոխարէն սերտաճել են ադմինիստրացիաներին եւ զբաղուած են միայն իրենց համար փափուկ կեանք ապահովելով: Այս ամէնի հետ միասին, բազմաթիւ ոլորտներում հաստատուել է մենաշնորհ յատուկ «կայսեր մերձաւորների» համար: Անհրաժեշտ է օրէնքի ուժով վերջ տալ այս համատարած ամենաթողութեանը եւ ստեղծել նախադէպեր, երբ աշխատաւորը կամ աշխատանքային կոլեկտիւը դատի կը տայ գործատուին՝ իրենց իրաւունքները կոպտօրէն խախտելու համար: Անհրաժեշտ է ստեղծել յստակ մեխանիզմներ, որոնց շնորհիւ աշխատաւորներն իրաւունք կունենան ստանալ արտօնութիւններ երկարամեայ աշխատանքի համար: Երբ մեր իշխանութիւնները խօսում են եւրոպական կենսամակարդակից, դրանով թերեւս հասկանում են եւրոպական գները: Այլապէս ինչպէ՞ս կարելի է հասկանալ այն աստղաբաշխական գումարները, որոնք այսօր առկայ են, ասենք, անշարժ գոյքի շուկայում: Եւրոպական եւ ամերիկեան լաւագոյն քաղաքներում անգամ, որտեղ ժողովրդի սոցիալական պաշտպանուածութիւնն ամենաբարձր մակարդակի վրայ է, չկան այնպիսի յիմար եւ արհեստածին գներ, ինչպիսիք Երեւանում են: Կատարենք մի պարզ եւ անմեղ հաշուարկ: Եթէ ընդունենք, որ մեր երկրում միջին աշխատավարձը 100 հազար դրամ է կամ 340 դոլար, իսկ ամենավատ բնակարանն արժէ մօտ 80 հազար դոլար կամ 24 միլիոն դրամ, ապա քաղաքացուն անհրաժեշտ է, ոչինչ չուտելու, չհագնուելու, չհանգստանալու դէպքում անգամ, աշխատել 240 ամիս կամ 20 տարի: Նման հնարաւորութիւն Հայաստանում ունեն միայն եւ միայն օլիգարխները, այն էլ՝ սովորական ժողովրդին հարստահարելու, կողոպտելու եւ խաբելու միջոցով: Սա յանցագործութիւն է սեփական ժողովրդի նկատմամբ, իսկ օր օրի, ժողովրդի վտարման հաշուին աւելացող էլիտար նորակառոյցները միայն եւ միայն բերում են մեր առաջադէմ հասարակութեան անէծքն ու պարսաւանքը: Այդ էլիտար անճոռնիութիւններն այն մեծ վիհի անխօս վկան են, որն առաջացել է շարքային քաղաքացիների եւ մի քանի «էլիտար» թաղանչիների միջեւ:*

*2. Կրթական համակարգի բացթողումները ու այն առողջացնելու դեղատոմսը*

*Սոցիալական արդարութեան կարեւորագոյն բաղկացուցիչներից է կրթական համակարգը: Խորհրդային հզօր կրթական համակարգից յետոյ մեր՝ մէկը միւսին յաջորդած կրթութեան նախարարների մեծ մասը ոչինչ չարեց՝ բացի սեփական խնդիրները լուծելուց: Այսպէս, վերջնականապէս քայքայուեց դպրոց-բուհ կապը՝ առաջացնելով կրկնուսոյցների ոչ լեգալ ինստիտուտը: Ուսուցիչների եւ դասախօսների աշխատավարձերը հասցրեցին ծիծաղելի աստիճանի՝ այս կերպ խրախուսելով նաեւ կոռուպցիայի մուտքը կրթական համակարգ: Մինչեւ այսօր ինձ ոչ ոք չի կարող համոզել, որ նախաբարութեան կոռումպացուած չինովնիկները կամ կաշառակեր դասաւորներն ու ամենաթող ոստիկաններն իրաւունք ունեն աւելի շատ աշխատավարձ ստանալ, քան սերունդ կրթողը: Անգամ եթէ փորձում ես բաղդատել այս մասնագիտութիւնները, նորից եւ նորից հասկանում ես, որ դպրոցն ու բուհն է, որ կերտում են աշակերտին եւ ուսանողին ու յանձնում Մեծ կեանք: Որքան վատ է այդ կրթութիւնը, որքան նիւթականացուած եւ կոռումպացուած, այնքան մեծանում են այն ռիսկերը, որ ապագայում աշակերտներն ու ուսանողները կարող են դառնալ յանցագործ եւ կաշառակեր չինովնիկ: Այսօր մեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները կրթութեան տաճարից վերածուել են առեւտրական ձեռնարկութիւնների: Սկսած ընդունելութեան քննութիւններից մինչեւ ասպիրանտուրա՝ կոռուպցիայի մակարդակը չափից աւելի բարձր է: Կրթական համակարգում բացակայում են այնպիսի կարգաւորող ինստիտուտներ, որոնք եւ կ'որոշեն, թէ որքան մասնագէտի կարիք ունի Հայաստանը այս կամ այն բնագաւառում: Աստղաբաշխական գումարների հասնող վարձավճարներով եւ ծիծաղ առաջացնող թոշակներով բուհը միայն մէկ խնդիր*

*Շար.ը էջ 19*

ՏԵՍԷ՛Ք՝
ԵԹԷ
BANKRUPTCY-Ի
ՕՐԷՆՔՆԵՐԸ
Կ'ՕԳՆԵՆ ՁԵԶԻ,
ԶԱՆԳԱՀԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209



Nazareth V. Jansezian, Esq.

**ՔԱՂԱՔԱԿԱՆ**

# ՕՊԱՄԱՅԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԱՊԱՀՈ՞Վ

***ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ***

*Ամերիկայի 2008 թուականի նախագահութեան համար տարուող ընտրական գործողութիւնները կ'աւարտին Նոյեմբեր 4ին: Յաղթական կ'ընտրուի, այսինքն այս մեծ երկրի նախագահ կը դառնայ այն թեկնածուն, տեմոքրաթ թէ հանրապետական, որ կ'ապահովէ 270 նահանգային ձայներ, այսինքն տարբեր նահանգներու վրայ համրուած ձայներու ընդհանուր գումարը: Այս գումարը տարբեր է ժողովրդային ձայներու գումարէն, որոնք կրնան աւելի կամ նուազ ըլլալ քան նահանգային ձայները: Օրինակի համար, նախանցեալ ընտրութեան, տեմոքրաթ Ալ Կոր ստացած էր Պուշէն աւելի ժողովրդային ձայներ, սակայն այս թիւը չէր համապատասխաներ նահանգային ձայներու աւելելութեան եւ ուրեմն Պուշ վերընտրուեցաւ նախագահ եւ այս ծանօթ է բոլորին, Դատական գերագոյն Մարմնի Միջամտութեամբ:*

*Ներկայիս, ընտրութեանց հագիւ մէկ շաբաթ մնացած, քուէախոյզ ընկերութեանց հաշիւներով, տեմոքրաթ թեկնածու Պարաք Օպաման ապահոված կը թուի ըլլալ նահանգային ձայներու մեծամասնութիւնը, շուրջ 260: Եթէ նահանգ մը եւս, այլ խօսքով Գոլորատօ, Այովա, Ֆլորիտա եւ կամ քանի մը «տաք» սեպուող նահանգներ քուէարկեն Օպամային, ան շատ հաւանաբար ըտրուի այս երկրի յաջորդ նախագահը: Նախատեսութիւնները ներկայիս այնպէս են որ ոչ միայն Օպամայի ընտրութիւնը գրեթէ ապահով կը նկատուի, այլ տեմոքրաթ կուսակցութիւնը հաւանականութիւնը ունի մեծամասնութիւն ապահովել Գոնկրեսի երկու բաժիններէն ներս, Սենաթ եւ Ներկայացուցիչներու Տուն, եւ այսպիսով ԱՄՆի քաղաքական ղեկը յանձնուի տեմոքրաթներու, որոնք միակուսակցական ղեկավարութեամբ կրնան առիթը ունենալ այս երկրէն ներս լուրջ փոփոխութիւններ մտցնելու, քաղաքական, տնտեսական, առողջապահական, ընկերային, եւ այլ մարզերու մէջ: Այս «վտանգ»ը նախատեսելով, հանրապետական կուսակցութեան պատասխանատուները իրենց թեկնածուներ Մքքէյնի եւ Փէյլընի միջոցաւ, տեսակ մը «ահազանգ» կը հնչեցնեն որ Ամերիկան դէպի «սոցիալիզմ» կ'առաջնորդուի, Օպամայի, Փելոսիի եւ Ռիտի առաջնորդութեամբ:*

***

### «ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

*Ամերիկեան հանրային կարծիքը, ըլլայ պաշտօնական կամ ժողովրդային, առ հասարակ կը «սարսափի» սոցիալիզմ բառէն, համոզուած ըլլալով, չիտակ թէ սխալ, թէ սոցիալիզմը, հայերէնի մէջ, ընկերվարական գաղափարախօսութիւնը, որ ունի նաեւ տնտեսական հետապնդումներ, վտանգ կը սպառնայ նախ քափիթալիստական-դրամատիրական դրութեան, եւ յատկապէս ազատ շուկայական կարգ ու սարքի եւ անհատական նախաձեռնութեան: Ամերիկացիք սակայն կը մոռնան, կամ կ'անգիտանան որ այս երկիրը, 1929ի «Depression»էն ասդին, եւ մանաւանդ նախագահ Ռուզվելթի «New Deal» ճանչցուած քաղաքատնտեսական գործընթացէն ասդին, արդէն մտած է «սոցիալիստական» հասարակարգէն ներս, երեւութապէս պահելով իր դրամատիրական դիմագիծը: Ամերիկայի ազգային կեանքի բազմաթիւ երեւոյթներ «սոցիալիստական» բնոյթ ունին: Ասոնցմէ պէտք է թուել «ընկերային Ապահովութեան» (Social Security) Առողջապահական երկու ծառայութեանց, (Medicare եւ Medi-cal), բանուորական խմբակցութեան (Labor Unions), հանրային կրթական (Public schools), եւ այլ դրութիւններ, որոնք ուղղակիօրէն «սոցիալիստական» են, առանց որ ամերիկացիները այդպէս ընդունին զանոնք: Կը մնար տնտեսական համակարգը, պանքային, կալուածային, առուծախի, եւ հարկային, վարկային դրութիւնները, որոնք իբրեւ թէ կառավարութենէն, այսինքն հսկողութենէ անկախ կը գործէին:*

*Տնտեսական ոչ միայն ամերիկեան, այլ համաշխարհային լուրջ տագնապը որուն ենթակայ է այսօր աշխարհի մեծ մասը, պարտադրեց Ամերիկային որ տնտեսական մարզն ալ ենթարկուի կառավարական հսկողութեան, 700 միլիար տոլարի փրկագինով մը (bailout), որուն գլխաւոր արտայայտութիւնը կը հանդիսանայ կառավարական հսկողութիւնը տնտեսական կացութեան վրայ, եւ այդ հսկողութիւնը ամենէն ցցուն օրինակը կը հանդիսանայ «սոցիալիստական» կոչուած դրութեան: Այնպէս որ, հանրապետականները փոխանակ Օպաման եւ տեմոքրաթները քննադատելու, եւ «սոցիալիստ» կոչելու, լաւ կ'ըլլայ որ հասկնան թէ ո՞վ Ամերիկան հասցուց այս ողբալի կացութեան, եւ ինչպէ՞ս պատահեցաւ ան: Ամերիկայի հանրային կարծիքը լաւ կ'ընէ վերլուծումներ կատարելու թէ իր այդպէս «ազատ շուկայական» ճանչցուած դրութիւնը ինչպէս յանգեցաւ փտախտի, կաշառակերութեան, մեծ ընկերութեանց ղեկավարներու «սխալ» առաջադրութեամբ, եւ տնային, բնակարանային, եւ պանքային ապիկար մատակարարութեամբ: Սոցիալիստական դրութիւնը քննդատելու տեղ, պէտք է իմաստութեամբ եւ ճշգրտութեամբ պէտք է գործադրուի, իր բարերար արդիւնքները ձեռք ձգելու համար: Գիտենք որ Քարլ Մարքսի անունը այս երկրի մէջ համազօր է դաւաճանութեան, եւ սակայն, իր իսկական կիրարկումով, Մարքսիստական սոցիալիզմը, ոչ այն մէկը որ Վլատիմիր Լենինի կողմէ պղծուեցաւ Կոմունիզմի, ֆանաթիքական համայնավարութեան, իսկական սոցիալիզմը, իր մէջ կը պարունակէ հումանիստական, մարդկայնական վեհ սկզբունքներ եւ ընկերային արդարութեան վստահելի քաղաքականութիւնը: Մենք առիթ կ'ունենանք յետագային խօսելու սոցիալիզմի եւ անոր իսկական իմաստի մասին:*

***

### ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԷԿ ՇԱԲԱԹ ՄՆԱՑԱԾ

*«Մասիս»ի յաջորդ թիւով արդէն վերջացած կ'ըլլան Նոյեմբեր 4-ի ընտրութիւնները, եւ երկիրը օժտուած նոր նախագահով, եւ նոր իշխանութեամբ: Մեր նախասիրութիւնները կ'երթան դէպի տեմոքրաթ թեկնածուները, Պարաք Օպաման եւ Ջօ Պայտընը, թէեւ այս վերջինը երբեմն «անզգոյշ» եւ իրենց կողմէ վնաս հասցնող արտայայտութիւններ կ'ունենայ: Ժողովուրդը սակայն կ'ընտրէ ցանկին գլուխը որ Պարաք Օպաման է: Որքան ալ հանրապետականները յարձակում գործեն Օպամայի վրայ, սեւ, «սոցիալիստ», «լիպերալ», «կասկածելի» յարաբերութիւններ ունեցող, այսօրուայ վիճակով, յաղթանակը կը թուի ապահովուած Օպամային եւ իր կուսակցութեան համար: Այս յաղթանակը յատկապէս թելադրուած երկրի վիճակուած տնտեսական տագնապով, այսինքն այս երկրի ընտրութիւնները պիտի որոշուին տնտեսական պատճառներով, եւ միւս պատճառները _ Իրաք, Աֆղանիստան, արտաքին քաղաքականութիւն, առողջապահական նոր դրութիւն, տնային տագնապ կը գրաւեն երկրորդական նշանակութիւն:*

*Համեբրութեամբ, եւ լաւատեսութեամբ կը սպասենք ընտրութեանց արդիւնքին, եւ կը թելադրենք որ մեր հայ ընտրողները նախ անպայման քուէարկեն, եւ ապա քուէարկեն ի նպաստ Օպամա-Պայտըն զոյգին: Մեզի հայերուս համար ալ, թերեւս նպաստաւոր է Օպամա-Պայտըն զոյգի ընտրութիւնը:*




**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

1975-2008
33th ANNIVERSARY
Life, Health, Group Health
Disability, Long Term Care
NEW YORK LIFE

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՄԱՆԹՕ
ՄԱՐՈՆԵԱՆ



818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԳԻԾԱՆՔ - ՀԱՅԱՍՏԱՆ 2008
# ՈՒՂԵԿՈՐՈՅՍ ԳՆԱՑՔԸ

Մեր նախորդ վեց համարներով. Պատմուածքի երեւանաբնակ հերոսը մտահոգ է 2008-ին տիրող ներքաղաքական ճգնաժամով: Իր ներքին խռովքը այլաբանական արտայայտութիւն կը գտնէ՝ երկաթուղային խօլարշաւ գնացքի մը օրերով կրկնուող երազով: Գնացքին մէջ ականատես կ'ըլլայ Յայաստանի ներկայ աւազակատիրութեան երկգլխանի բռնապետի եւ իր կամազուրկ խամաճիկներու շռայլ կենցաղին, եւ միւս կողմէ՝ կալանաւոր քաղբանտարկեալներու դէմ զարհուրելի ոճիրներուն: Մարտ 1-ին Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ ան կ'իյնայ՝ խաղաղ հանրահաւաքի դէմ իշխանութեան վայրագութիւններու յորձանքին մէջ: Կը բանտարկուի, եւ օրուայ ողբերգութեան անդրադարձը բանտին մէջ կը շարունակուի իր մղձաւանջային երազի նոր զարգացումներով:Իր եւ բանտընկեր հոգեբուժին դէմ բեմադրուած դատական խեղկատակութենէն ետք անոնք կ'ենթարկուին երկար ամիսներու ազատազրկման, որու ընթացքին կը հիւանդանան ծանրօրէն: Բանտին մէջ հոգեբուժի դաժան մահէն ետք ան իր երազներու վայրաշարժը կ'ուղեւորէ մինչեւ Մոնկոլիա: Այնտեղ կը բեռնաթափէ ու յատուկ հիմնարկի մը խնամքին կը յանձնէ Յայաստանը գերեվարած մոնղոլատիպ խանիկներն ու անոնց խամաճիկները ամբողջական կազմով՝ զինաթափուած ու չէզոքացուած...:

Ամբողջ ժողովուրդի մը գոյութեան սպառնացող ոճրագործներու վոհմակի մը կողմէ, օր-ցերեկով, մեր բոլորի աչքերուն առջեւ անպատկառօրէն բեմադրուող տիկնիկային այս անհեթեթ թատերախաղը մօտեցած է իր աւարտին: Կը մնայ եզրափակիչ արարը որ չէ գրուած տակաւին: Վերջին արարի իրակա՛ն գործողութիւնները պիտի գան ցոյց տալու թէ՝ մեր բիւրաւոր դիւցազուններու, ֆետայիներու, ազատամարտիկներու հերոսական աւանդներուն արժանի՞ ժողովուրդ ենք, թէ՞...: Յաւատքն ունինք ու յոյսը թէ՝ արժանի՛ ենք: Սարտարապատի գոյամա՛րտը եւ արցախեան ազատամա՛րտը վկայ:

***ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ***
***(Շարունակուածնախորդթիւէն)***

*Մոնկոլ քաղաքապետին ճակատը կը կնճռոտի, նայուածքը կը մռայլուի, լեզուն կը պապանձի:*

*- Բաւական բարդ կ'երեւայ հարցը, - մտահոգ կը յարէ ան: - Իր տեսակին մէջ եզակի պարագայ,* one of a kind, *ինչպէս պիտի ըսէին անգլերէն լեզուով:*

*- Անոնք մեծ փորձանք մըն են փոքր ու հետզհետէ աւելի փոքրացող մեր ազգի գլխուն, _ կը շարունակէ Թաթուլ: _Բայց քանի ձեր երկիրը այսքան ընդարձակ է եւ այսքան ցանցառ բնակեցուած, թերեւս կարենաք յարմար անկիւն մը շնորհել անոնց: Կը կարծեմ որ ձեր ազգային աւանդութիւններն ու օրէնքները կրնան մեծապէս սատարել անոնց վերակրթութեան, որպէսզի անոնք հրաժարին իրենց արիւնարբու սովորոյթներէն ու դառնան աշխատասէր եւ օրինապահ քաղաքացիներ: Ասոր կարելիութիւնը մեզի ընծայելով դուք շատ մեծ օգնութիւն մը ըրած պիտի ըլլաք մեր ժողովուրդին, որպէսզի ազատօրէն եւ արժանապատուութեամբ շարունակէ իր համեստ բայց օգտակար կեանքը: Աւելցնեմ: Մեր ժողովուրդին դէմ այս խամաճիկ մարդատեսակներու բռնութիւններուն չենք ուզեր հակադարձել ու ֆիզիքապէս բնաջնջել զանոնք, ինչպէս որ անոնք տառացիօրէն կ'ըսէին ու կ'ընէին՝ արդարութիւն պահանջող խաղաղ ցուցարարներուն դէմ: Մեր նոր ղեկավարները հաւատարիմ հետեւորդներն են անզուգական մարդասէր Մահաթմա Կանտիի, ու կը մերժեն անոնց դէմ կիրարկել այս նենգ ու ստոր մեթոտները որ անոնք գործի դրին մեր դէմ:*

*Ու հեռուէն մատնացոյց ընելով միւսներէն հեռու, երեսը կախ ու խոժոռ, անկիւն մը մեկուսացած երկգլխանին, Թաթուլ կը մանրամասնէ առ ի տեղեկութիւն:*

*- Յատուկ ուշադրութեան կը կարօտի երկգլխանին՝ արքայիկ Ալի Պապան _ մանաւանդ իր այն կէսը որ արիւնարբու Ռոպիկի գարշադէմ գլուխն ու ոճրագործի սիրտն ունի: Իր մէջ գրեթէ միշտ մոլեգին մղում մը կայ ուրիշները ցաւցնելու, յատկապէս բոլոր անոնք որ որեւէ խնդրի մասին իրմէ տարբեր կը խորհին եւ անգէն կամ անպաշտպան կը ներկայանան իրեն: Ոմանք հոգեվերլուծական բացատրութիւններ կու տան թէ մանկութեան սաստիկ ցաւ մը կամ շատ վատ փորձառութիւն մը ունեցած ըլլալու է զոր հիմա ուրիշներու ուսերուն կ'ուզէ փոխադրել: Վստահ չեմ: Բայց վստահ եմ որ բազմաթիւ մեծ ոճիրներ ու մարդասպանութիւններ գործած է տասը տարուայ իր նախագահութեան ընթացքին: Կը յուսամ որ այստեղի ֆիզիքական աշխատանքային առօրեան ու քչիկ մը խիստ կլիման դաստիարակիչ անդրադարձ կ'ունենան երկգլխանիի նկարագրին վրայ:*

*Անել ու բարդ մտածումներու մէջ կը խորասուզուի Ուլաանկոմի լրջախոհ քաղաքապետը: Ամենէն հասարակ որոշումը կամ ամենալուրջը առնելէ առաջ, պատասխանատուութեան օրինակելի գիտակցութեամբ, հարցը կարելի բոլոր երեսներով կը քննէ ան: Բաւական երկար ու խոր մտածելէ ետք խօսք կ'առնէ քաղաքապետարանի խորհուրդին առջեւ, մանրամասնօրէն կը ներկայացնէ Թաթուլի դիմումը եւ ուշի ուշով մտիկ կ'ընէ անոնցմէ իւրաքանչիւրի կարծիքին: Եզրակացնելով, արագ նօթագրութիւններ կը կատարէ իր օրագրին մէջ, ապա կը դառնայ Թաթուլին.*

*Կազմակերպութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի Արտաւազդ Թատերախումբին, Կիրակի Հոկտեմբեր 26, երեկոյեան ժամը 5:00էն սկսեալ, Փասատինայի Հ.Բ.Ը.Մ.ի Պօյաճեան սրահէն ներս տեղի ունեցաւ բաւականին հետաքրքրական երեկոյ մը, «Սարոյեան Վերագտնուած» խորագրով, ի ներկայութեան գրասէր հասարակութեան մը, որ խուռներամ փութացած էր ներկայ գտնուելու:*

*Հետաքրքրական բովանդակութեամբ հանդիսութիւն մըն էր, նուիրուած ամերիկագիր հայ գրողի 100-ամեակին: Ձեռնարկի բացման խօսքը ըրաւ Գէորգ Քէշիշեան, Արտաւազդ Թատերախումբի անունով: Ապա ծանօթ բեմադրիչ եւ վաստակաւոր դերասան եւ երգիծական յայտագրերու վարպետ՝ Գրիգոր Սաթամեան հիւմորախառն քանի մը տեղեկութիւններէ ետք, շուրջ 15 վայրկեան ներկաներու հրամցուց պաստառի վրայ յայտագիր մը, 1979ին նկարահանուած, Պոսթոնի մէջ, ուր վարպետը, Ուիլիըմ Սարոյեան, իրեն յատուկ պերճախօսութեամբ, կը քննարկէր Տիանա Տէր Յովհաննէսեանի եւ Մարգպետ Մարկոսեանի կողմէ հայերէնէն անգլերէնի թարգմանուած բանաստեղծութեանց հատորը: Ներկաները մեծ հետաքրքրութեամբ ընդունեցին այս ցուցադրութիւնը:*

*Ապա տեղի ունեցաւ Սարոյեանի իսկ բեմադրած կարճամեթրաժ ֆիլմ մը, որ կը տառապէր որակի եւ ձայնի դժուարութիւններէ:*

*Նոյնպէս տեղի ունեցաւ բեմականացուած ընթերցում մը, դպրոցական աշակերտներու կողմէ «Անունս Արամ է» վէպէն: Այս ընթերցումն ալ կրնար աւելի խնամուած եւ յաջող ըլլալ:*

*Երկրորդ խօսողը, Օշին Քէշիշեան, որ նոր վերադարձած էր Հայաստանէն, ներկայ գտնուելէ ետք Սարոյեանի նուիրուած բազմաթիւ համագումարներու, եւ երկար տարիներու վրայ ճանչնալով հռչակաւոր հեղինակը, բաւականին հաճելի ոճով եւ հետաքրքրական տեղեկութիւններով յագեցած ելոյթ մը ունեցաւ որ մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ:*

*Ձեռնարկի աւարտին, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:*

*Մեծ գրողին վաստակին վայել ձեռնարկ մըն էր, որուն համար շնորհաւորելի է Հ.Բ.Ը.Մ.ի Արտաւազդ Թատերախումբը:*

**ԲԱՑՈՒԱԾ Է**

**Հիպնոսաբուժութեան կեդրոն**
**ղեկավարութեամբ՝**
**Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի**
**Փասատինայի մէջ**
**Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն**
**մինչեւ կ.ե. ժամը 3:00**

**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E**
**Pasadena CA 91104**
**Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ**

## ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

# ՅԻՇԵԼՈՎ ՕՐՄԱՆԵԱՆԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ

*ԱՐՄԷՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ*

*Հոկտեմբեր է:*

*Մեր ուշադրութիւնը ակամայ կը կեդրոնանայ գիրերու գիւտին, Մեսրոպ Մաշտոցին, թարգմանութիւններուն եւ թարգմանիչներուն ու անոնց հայոց քրիստոնէացման ու հայապահպանման համար կատարած գերազանց ջանքերուն վրայ:*

*Եթէ Գրիգոր Լուսաւորիչի ջանքերով քրիստոնէութիւնը եղաւ հայոց պետական կրօնքը, Մեսրոպ Մաշտոցի ջանքերով ալ հայ ժողովուրդը իւրացուց քրիստոնէութիւնը:*

*Պատմութիւնը ինչ-ինչ մեծերու անունները արձանագրեց, բայց այդ անուններուն մեծամասնութիւնը մնաց պատմութեան գիրքերուն մէջ: Քիչերու անունները քանդակուեցան մեր յիշողութեան մէջ: Մեսրոպ Մաշտոց եղաւ այդ քիչերուն գլխաւորը:*

*Կ. Պոլսոյ մեծանուն պատրիարքներէն, եկեղեցական նիւթերով հարուստ ժառանգութիւն մը թողած, իր հեղինակութիւններէն ոմանք տարբեր-տարբեր լեզուներու թարգմանուած, աստուածաբան, դիւանագէտ, համիտեան օրերու իր գահակալութեան շրջանին «Գնա՛ մեռիր, եկուր սիրեմ» ասացուածքին հլու-հնազանդներուն հալածանքին ենթարկուած ապա փառաբանուած, Մաղաքիա Արք. Օրմանեան Հայաստանեայց Եկեղեցւոյ երկու հազար տարուայ պատմութիւնը ներկայացնող «Հայ Տպագրութեան Զորրորդ Հարիւրամեակ»-ին եւ «Հայ Գրութեան Հնգետասաներորդ Հարիւրամեակ»-ին* (1) նուիրուած հարուստ բովանդակութեամբ իր «Ազգապատում»-ին մէջ, Մեսրոպ Մաշտոցը կը ներկայացնէ հետեւեալ տողերով. «Նորա բուն անունն է Մաշթոց, հայրը Վարդան, ծննդավայրը Հացիկ գիւղ, Տարոն գաւառի մէջ, որով կը լինի Մամիկոնեան ազգի կամ ցեղի սերունդ, քանի որ արքունիքի մէջ պաշտօնավարութեամբը ռամիկ դասակարգէ չլինելն ալ կը վկայուի»: (2) «...Մաշթոց 394-ին եկեղեցականութեան նուիրուած ատեն 40 տարեկան, աշխարհքի փորձառու, գործունէութեան մէջ եփած, զարգացեալ եւ ճարտար անձ մըն էր, որ ոգեւորութեան բուռն թափով մը իր նոր կոչումին կը նուիրուէր»: (3) Օրմանեան, Մեսրոպ անուան համար ալ կու տայ հետեւեալ բացատրութիւնը. «Մաշթոցի տրուած Մեսրոպ անունը, որ պատմութեան մէջ նախընթաց չունի, ...ենթադրութեամբ հնար է ըսել, թէ եկեղեցական ձեռնադրութեան մէջ անունի փոփոխութիւն ունեցած է»: (4)*

*Սեփական գիրերու չգոյութեան պատճառով, Լուսաւորչի օրէն ի վեր, «...երկու նոր դասակարգեր կազմուած էին եկեղեցական պաշտամանց համար, Վերծանող՝ որ օտար լեզուով գիրքերը կարդալու վարժութիւն ունեցողներէ կը կազմուէր, եւ Թարգմանիչ՝ որ օտար լեզուով գիրքերը բերանացի եւ առետեղ ժողովուրդին կը թարգմանէին: ...դար մը ամբողջ այդ կերպ վարուած էր Հայ Եկեղեցին, սակայն արքունական քարտուղարութենէ եկած պաշտօնէի մը պահուած էր՝ խորապէս զգացուիլ այդ տարօրինակ կացութենէն, եւ փղձկացեալ հոգալ, թէ ինչո՞ւ հնար պիտի չըլլայ ինքեան ձայնիւ եւ ոչ մուրացածոյ բարբառով, մայրենի լեզուով եւ ոչ օտարի լեզուով շահիլ զոգիս արանց եւ կանանց առհասարակ յամենայն եկեղեցիս: Ահաւասիկ Հայ գիրի գիւտին եւ Հայ դպրութեան սկսելուն բուն եւ ներքին շարժառիթը»: (5)*

*Երբ Վռամշապուհ թագաւոր Վահրիճ անուն անձ մը՝ «...թագաւորական դիւանի պաշտօնեաներէն գլխաւոր մը, օտար լեզուաց ալ հմուտ»(6) Դանիէլեան գիրերը բերելու համար Միջագետք ղրկեց, Սահակ եւ Մեսրոպ հաւաքեցին եպիսկոպոսները՝ «նոր գիրին եւ ազգային դպրութեան տարածման համար միջոցները կարգադրելու, եւ որչափ հնար է շուտով զայն ընդարձակելու եւ ժողովրդական դարձնելու համար կը խորհէին»: (7)*

*Օրմանեան ակնարկելով բերուած Դանիէլեան գիրերուն կ'ըսէ. «անգործածական թողուած տառեր կային, զորս Մեսրոպ յունական ալփաբետի առաջնորդութեամբ՝ կարգի կանոնի վերածեց:»(8) Եւ իր գնահատանքով «...Դանիէլեան նշանագիրները Հայ դպրութեան սկզբնաւորութիւնը նուիրագործեցին»:(8)*

*Օրմանեան եզրափակելով գիրերու գիւտի, դպրոցներու բացման եւ թարգմանութեանց յատկացուցած իր սիւնակները, կը գրէ. «Եթէ Հայոց եկեղեցին իրեն յատուկ գիրն ու գիրքերը չունենար, երբեք պիտի չկարենար իբր ինքնուրոյն եկեղեցի իր գոյութիւնը ապահովել, եւ պէտք էր որ ձուլուէր եւ ընկղմէր որեւէ մէկ եկեղեցւոյ մէջ, որուն լեզուն ու գիրն ու գիրքը իրեն համար գործածական պիտի ըլլային: Որեւիցէ հանրային մարմին մը, հնար չէ որ լոկ խղձերու եւ զգացումներու ուժով կարենայ իր կեանքը ապահովել: Կեանքը արտաքին եւ զգալի բան մըն է, եւ պէտք է որ արտաքին եւ զգալի ոյժ մըն ալ գայ զայն ամրապինդ պահպանելու: Հայը, որ քաղաքական կացութեան զօրութիւնը՝ հինգերորդ դարէն սկսելով կորսնցուց, եթէ չունենար իր գիրն ու գրականութիւնը, որ իբրեւ խարիսխ յուսոյ եւ իբրեւ հիմ հաստատութեան, անոր ապաւէնն եղաւ իր ալեծուփ վտանգներուն եւ իր ցրուած եւ վայրավատին կեանքին մէջ, այսօր հազիւ թէ Հայ ազգի մը յիշատակը մնացած կ'ըլլար, ինչպէս ի զուր կը փնտռուին Մարաց ու Պարթեւաց, Ասորեստանեայց եւ Բաբելացւոց հետքերը այժմեան աշխարհի մէջ: ...Այսօր եթէ հայ կայ, աւելի քան Հայկայ արիւնը, Սահակի եւ \Մեսրոպի միտքն է անոր կեանք տուողը, եւ այդ մեծ բարիքն ալ եկեղեցւոյ ծոցէն ծնաւ: ...*

*Գիրն ու գիրքը եկեղեցիով, եկեղեցին ալ գիրով ու գիրքով, իրարու անբաժան փաթթուած, \դարերու փորձանքներուն, Հայուն անլուր տագնապներուն, Հայութեան անըմբերելու** վտանգներուն դէմ անվկանդ*** ոյժ մը կազմեցին»: (9)*

*Այսօր, Օրմանեանի այս տողերէն 96 տարի յետոյ, մեր եկեղեցին՝ Գանատահայոց Առաջնորդարանն ու Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցին, կ'երեւի Օրմանեանի վերոյիշեալ տողերէն անտեղեակ, իրենց համացանցային կայքէջներուն մէջ, իրենց լրատուութիւնները կը կատարեն միայն անգլերէնով, բոլորովին զանց առնելով մեր լեզուն, հայուն լեզուն, Հայաստանեայց Եկեղեցւոյ լեզուն՝ ՀԱՅԵՐԷՆԸ:*

*Սփիւռքի տարածութեան վրայ հայապահպանումը անհրաժեշտութիւն մըն է, եւ երբ հայերէնը հայապահպանման անհրաժեշտութեան անբաժան մէկ մասնիկը կը կազմէ, եկեղեցւոյ կայքէջներուն մէջ հայերէնի բացակայութեամբ արդեօք մեր երիտասարդութեան, մեր համայնքներուն, անուղղակի, ի՞նչպիսի պատգամ մը կը ղրկուի: «Հայերէն կարդալ, գրել գիտնալ անհրաժեշտութիւն մը չէ: Հայաստանեայց Եկեղեցին հայերէնը անտես կ'առնէ, դուք ալ կրնաք»:*

*Եթէ կայքէջներէն հայերէնի բացակայութեան պատճառը ոչ թէ հայերէնի անտեսումն է, այլ մեր հաստատութիւններէն ներս կամաւոր եւ սիրայօժար ծառայողներուն հայերէն լեզուի տիրապետութեան պակասն է, եւ կամ անոնց մեսրոպեան ուղղագրութեան անտեղեակութիւնը, եկեղեցաշինութեան եւ եկեղեցիներու զարդարումին համար մեծաքանակ գումարներ յատկացնող մեր հոգեւորականներն ու վարչականները, թեմին բոլոր եկեղեցիներուն հայերէն գրութիւնները պատրաստելու համար, արեւմտահայերէնը եւ մեսրոպեան ուղղագրութիւնը իւրացուցած ամսականաւոր քարտուղար մը կրնան պաշտօնի կոչել:*

*Մեր վարչականներէն հայերէն գրել ու կարդալ չգիտցողներ այս յօդուածէն անտեղակ պիտի մնան, սակայն իրենց կոչումին ու ուսման բերումով հայերէնի քաջատեղեակ պատասխանատու անձեր՝ Թեմական կամ Ծխական, թող այս գրութիւնը նկատեն իրենց մէկ երէց եղբօր շինիչ քննադատութիւնը, եւ սրբագրեն Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքելութեան ներհակ այս կացութիւնը:*

******

*Ազգապատում- Բ. Տպագրութիւն, Ա. Հատոր, Մասն Ա. -Պէյրութ 1959 - (1) սիւնակ 16, (2) ս.266, (3) ս.267, (4)*

*ս.268, (5) ս.269, (6) ս.271, (7) ս.272, (8) ս.273, (9) ս.284 - 285*

** գիրերու գիւտի 1500- ամեակ*

*** անտանելի*

**** ամուր (Հաւատարիմ մնացուած է բնագրի ուղղագրութեան):*

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ-ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**
**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**
**(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**
**GLOABCAST SATELLITE**
**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

**ՔԱՋ ՆԱԶԱՐ**
**ՌՈՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**
**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00-ից 12:30**
**Կլէնտէյլի 280-րդ կայանից**

HMM Ladies Auxiliary
New Years Eve Celebration




Featuring Live Entertainment by DJ Hratch
December 31, 2008, at 8:00 p.m.
HMM Garo Soghanalian Hall
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104
Admission: $50.00 • Ages 6-12: $25.00 • Ages 5 & Under Free

## ՅՈՒՇԵՐ

# «ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՒ. ՔՀՆՅ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԲԱԼԱՅԵԱՆ

### ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

*Օտար եւ անհարազատ երկնակամարների ներքոյ, հայը անտեսելով աննպաստ եւ ոչ նախանձելի պայմանները, իր հոգու մխիթարութեան ու ցաւերի ամոքման միակ դարմանն է նկատել աղօթատունը: Այնտեղ նա ծնրադիր աղօթել ու մրմնջացել է հոգեպարար շարականներ: Ղազուինահայ գաղութը _ ըստ իմ քաղած տեղեկութիւնների հիմնուել է մօտաւորապէս 1850 թուականին: Սկզբում գաղութը բաղկացած է եղել 8-10 ընտանիքից եւ հետզհետէ աճել է: Հայ ընտանիքները եկել են Սպահանից եւ Ղարաղանից: «Թեհրանի դարւազէ» կոչուած թաղամասում _ ուր ապրում էին հայերը _ կառուցել են մի փոքրիկ աղօթավայր: Թեհրան պողոտայում տեղաւորուած են եղել մի քանի հիմնարկներ եւ հեռագրատունը, որտեղ աշխատել են Մարգար եւ Ռուբէն անունով հայեր, որոնք հեռագրական գործիքների հմուտ եւ միակ մասնագէտներն են եղել այն օրերին:*

*Մի քանի տարիներ յետոյ, աղօթավայրը Թեհրանի դարւազէից փոխադրւում են Ռաշտի պողոտան: Բազմանալով հայութեան թիւը, հայերը, Ղազուինի «Շահ» կոչուած պողոտայի վրայ (Ներկայումս Թալեղանի), եղբայրք Բարխուդարեանների հողամասին կից, մի ընդարձակ տարածութեան վրայ կառուցում են արդիական դասարաններ, խանութներ, մարզադաշտ, թատերասրահ, ջրամբար եւ այլ յարմարութիւններ, որոնք օգտագործւում են մինչեւ օրս (1981 թ.): Ազգային կալուածները արձանագրուած են «Օղաֆ» կոչուած հիմնարկում, եւ այդ հարցը, տարիների ընթացքում որոշ դժուարութիւններ է յարուցել:*

*Հայոց գերեզմանատունը նախկինում գտնւում էր քաղաքի հիւսիսային մասում, «Շահզադէ Հոսէյն» կոչուած մզկիթի մօտ: Մինչեւ այսօր էլ այդ աւերուած գերեզմանատանը կան շիրիմաքարերի կտորներ, որոնց վրայ փորագրուած են հայերէն տառեր: 1956 թէ 57 թուին, երբ Ղազուին ժամանեց յայտնի բանասէր Հայկ Աճէմեանը, միասին այցելեցինք հայոց հինաւուրց այդ գերեզմանատունը: Այդտեղ Հայկ Աճէմեանը երկար պրպտումներից յետոյ, 10-15 քարակտորներ, ի մի բերելով, պարզեց որ շուրջ 1900 թուին, Ղազուինում համաճարակի զոհ են գնացել շուրջ երկու տասնեակ հայ մանուկներ եւ պատանիներ: Հետագային, երբ հայոց գերեզմանատունը փոխադրուեց քաղաքի հարաւային մասը՝ «Դարբէ քուշք» կոչուած դարպասի մօտ, 10,000 մեթր տարածութիւն ունեցող մի այգում, ժամանակի հոգաբարձութեան ջանքերով, բազմաթիւ շիրիմաքարեր փոխադրւում են նոր գերեզմանատուն: Ներկայի հայոց գերեզմանատունը ծառազարդ մի պարտէզ է, որն այսօր արդէն շրջապատուած է բազմաթիւ արդիական շէնքերով, ու շրջանի բնակիչների բողոքին ընթացք տալով, Ղազուինի Քաղաքապետարանը արգելել է ննջեցեալ թաղել այդ վայրում: Բայց ազգային մարմինները ընդդիմացել են այս որոշումին եւ պահանջել որ քաղաքապետարանը ղազուինահայութեանը տրամադրի մի յարմար հողամաս գերեզմանատան համար: Հայոց գերեզմանատունը ունի իր պահակը:*

*Յիշեմ նաեւ, որ հայոց գերեզմանատանն է գտնւում երկրորդ պատերազմի ընթացքում զոհուած 47 Սովետական բանակայինների հաւաքական գերեզմանը, որի վրայ կառուցուած է մի մեծ յուշարձան, պատշաճ արձանագրութեամբ: Ամէն տարի, Սովետական Միութեան Թեհրանի դեսպանատան անձնակազմից մի քանի հոգի, այցելում են այդ յուշարձանին եւ ծաղկեպսակներ դնում:*

### ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ (ՂԱԲՐԷ ԽԱԼԻՖԷ)

*Ղազուինից դէպի հարաւարեւմուտք, գետակի ափին կից, տարիներ ի վեր մնացել է մի գերեզման, որի աջ ու ձախ կողմերում կան երկու բարձրակատար թթենիներ: Ծառերը կտրեցին բայց արմատները կան: Վերոյիշեալ անփառունակ գերեզմանը դարձել է ուխտավայր, հարիւրաւոր մուսուլմանների համար, որոնք այդ կոչում էին «Ղաբրէ Խալիֆէ»: Ամէն Հինգշաբթի մայրամուտին, բազմաթիւ հիւանդներ, ընկնաւորներ, կոյրեր բերում էին այդ գերեզմանի վրայ, աղօթք անում, մոմ վառում, եւ սպասում էին հրաշքի: Այդ մասին հետաքրքրուեցի մի քանի տարեց պարսիկներից եւ ղազուինահայ ազգայիններից: Այսպէս տեղեկացրին ինձ: Սրանից շուրջ 100 տարի առաջ, մի հայ վարդապետ, Երուսաղէմից գալով, Կովկաս պիտի անցնէր: Ղազուին հասնելով գիշերում է մի պարսիկի թէյատնում: Գիշերը թէյատան տէրը սպանում է վարդապետին ու թաղում քիչ հեռու գտնուող գետի ափին: Սակայն յաջորդ օրերին, խղճի խայթ զգալով, երազ է տեսնում, որ հայ վարդապետի գերեզմանը լուսաւորուած է երկնքից իջած ճառագայթներով: Քնից արթնանալով խելագարի պէս սկսում է պոռալ, օգնութիւն կանչել եւ բոլորին պատմել իր տեսած երազը: Հաւատացեալ մուսուլման ժողովուրդը այնուհետ այդ գերեզմանը համարում է որպէս սրբատեղի եւ ուխտավայր եւ մի քանի տասնեակ տարիներ խնամքով պահւում է այդ: Տարիներ առաջ բանասէր Հայկ Աճեմեանի հետ այցելեցինք այդ շրջանը, բայց որեւէ հետք չկարողացանք գտնել հայ վարդապետի գերեզմանից:*

### ԵՂԲԱՅՐՔ ՔՈՌՈՂԼԵԱՆՆԵՐ

*Երեւանից 1930 թուին Թաւրիզ էին եկել եղբայրք Քոռողլեանները եւ հիմնել իրենց ջուլհականոցը: Մեծ եղբայրը՝ Ալեքսանը, հմուտ էր գործին: Իրեն օգնում էր միւս եղբայրը՝ Բաղդասարը: 1933 թուի Յուլիսին Ղազուին փոխադրուեցին Քոռողլեան եղբայրները, իրենց ընտանիքներով եւ Բուլաղի թաղամասում, հիմք դրեցին մի նոր ջուլհականոցի: Այդտեղ գործի անցան բազմաթիւ հայ բանւորներ: Ընդարձակելով գործը, 1938 թուին, քաղաքի հիւսիս-արեւելեան մասում, գնեցին Աւետիս խանի մեծ հողամասը եւ հիմնեցին այն օրերի հաշուով արդիական հիւսուածքեղէնի գործարան, որը տարիների ընթացքում ընդարձակուելով դարձաւ Իրանի ամենամեծ եւ արդիական գործարաններից, որի արտադրութիւնը նոյնիսկ արտածւում էր արտասահմանեան որոշ երկիրներ: Յակոբ Քոռողլեանը եւ իր ազնիւ տիկինը՝ Օֆելիան, միշտ էլ հետամուտ էին հանրային գործերին, ու նիւթական եւ բարոյական մեծ օժանդակութիւն ցուցաբերեցին ազգային հաստատութիւնների նկատմամբ: Տարիներ շարունակ Քոռողլեան գործարանը ամսական սակ էր նշանակել Ղազուինի եկեղեցուն եւ դպրոցին, որ վճարւում էր կանոնաւորութեամբ: Տարիներ առաջ, երբ Յակոբ Քոռողլեանը վաճառեց գործարանը մէկ օտարի, նրա հետ պայման դրեց, որ ամսական սակը վճարուի:*

### Ս. ՀՌԻՓՍԻՄԷ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄԻ ՄԱՍԻՆ

*Ղազուինահայ Յովհաննէս Բարսեղեանը հաւատացեալ եւ ազգասէր մի անձնաւորութիւն էր: Ա. համաշխարհային պատերազմին եկել էր Իրան ու հաստատուել Ղազուինում: Իր տքնաջան աշխատանքի շնորհիւ կարողանում է գնել «Ման» տեսակի մեքենաներ ու ստեղծում է տնտեսական լաւ պայմաններ: Ժողովուրդ «Ման» Յովհաննէս էր կոչում նրան: Նա միշտ հետամուտ էր ազգային կեանքին եւ օգտակար էր նիւթապէս եւ բարոյապէս: Այնպէս պատահեց որ Յովհաննէսի անդրանիկ դուստրը Հռիփսիմէն, ծանրօրէն հիւանդացաւ, ու փախդրուեց Թեհրան: Ի դերեւ ելան բժիշկների խնամքը եւ 14 ամեայ Հռիփսիմէն վախճանուեց անսահման վիշտ պատճառելով իր ծնողներին, հարազատներին եւ ղազուինահայ համայնքին: Դա 1934 թուի Մարտ 12ին էր: Յաջորդ օրը տարաբախտ Հռիփսիմէի մարմինը փոխադրուեց Ղազուին եւ յաւարտ Ս. Պատարագի, որն մատուցուեց փոքրիկ աղօթատան մէջ, տողերիս գրողը քարոզ խօսեց եւ վշտաբեկ սրտով մխիթարութիւն հայցեց վշտահար ծնողներին: Տեղի փոքրութեան պատճառով, հարիւրաւոր յուղարկաւորներ կագնել էին պատշգամբում եւ դպրոցի բակում: Այդ առթիւ ես ակնարկեցի ու աւելացրի-խիստ ցաւալի է որ մեր համայնքը զրկուած է պատշաճ եկեղեցի ունենալուց:*

*Յուղարկաւորութիւնից յետոյ, հոգեհացի ընթացքում Յովհաննէս Բարսեղեանը խիստ յուզուած յայտարարեց, որ «Խօսք եմ տալիս ղազուինահայութեան, որդուս մահուան տարին չլրացած, սիրասուն Հռիփսիմէիս եւ մօրս, Հռիփսիմէի յաւէտ անմոռաց յիշատակին, Ղազուինում կառուցել մի փառաւոր եկեղեցի»: Այս յայտարարութիւնը խանդավառութիւն ստեղծեց ու ներկաները ողջագուրուեցին Յովհաննէսի հետ:*

*Յովհաննէս Բարսեղեանը գործի բերումով յաճախ բացակայում էր քաղաքից: Երբ տեղեկանում էի, որ Ղազուին է վերադարձել, շտապում էի իրեն մօտ եւ յիշեցնում իր խոստումը: Խրախուսում եւ քաջալերում էի օր առաջ սկսել եկեղեցու կառուցումը: 1936 թուի Ապրիլ 7ին հոգաբարձութեան նախագահ Դոկտ. Արմենակ Աֆթանդիլեանի բնակարանում կայացաւ խորհրդակցական ժողով, որտեղ ընթերցուեց Յովհաննէս Բարսեղեանի դիմում-նամակը, ազգային դպրոցին կից հողամասում եկեղեցի կառուցելու կապակցութեամբ: Ժողովը խանդավառութեամբ ընդունեց այդ առաջարկը: Ես որպէս ծխատէր քահանայ, օրհնեցի բարերարին եւ ազգային մարմնին: Խանդավառ այդ մթնոլորտի մէջ, տեղւոյս ազգայիններից՝ Միքայէլ խան Բարխուդարեանը դպրոցին նուիրեց ազգային հողամասին կից իր այգիներից 500 մեթրի չափ մէկ տարածութիւն: Կային նաեւ անհատներ, որոնք «աւելորդ» էին համարում եկեղեցու կառուցումը եւ մինչեւ իսկ համբարձակութիւն ունեցան Մելիք-Թանգեան Սրբազանին գրել եւ բողոքել, որ իբրեւ թէ ես «բարոյական ճնշում» եմ բանեցրել Յովհաննէս Բարսեղեանի վրայ եկեղեցի կառուցելու համար: 1936 թուի Ապրիլ 12ին, «Ալիք» թերթում պաշտօնական յայտարարութիւն եղաւ եկեղեցու կառուցման համար եւ անցանք գործի: Ղազուինաբնակ բոլոր մեքենավարները իրենց մեքենաներով, հերթով սկսեցին շինանութ փոխադրել դէպի ազգային հողամասը, առանց նիւթական ակնկալութեան: Մէկ խօսքով բոլորը գործի վրայ էին: Ամէն մարդ որեւէ ձեւով օգնում էր եկեղեցաշինութեան գործին: Ապրիլ 14ին եկեղեցական հանդիսաւոր արարողութիւն կատարեցինք: Դպրաց դասը դպրապետ Սեդրակ Բարսեղեանը եւ սարկաւագ Աբգար Միրզայեանը փայլ տուին եկեղեցական արարողութեանը: Եկեղեցու յատակագիծը կազմեցի ես, դոկտ. Արմենակ Աֆթանդիլեանի հետ խորհրդակցաբար եւ աշխատեցինք եկեղեցին, թէ ներքին թէ արտաքին ձեւով պատշաճի հայոց Առաքելական Եկեղեցուն, Ս. Էջմիածնի նմանութեամբ: Եկեղեցու հիմնարկէքի արարողութիւնը տեղի ունեցաւ 1936 թուի Մայիս 28ին, խուռներամ ժողովրդի մասնակցութեամբ: Մատուցուեց Ս. Պատարագ, ապա պատշաճ արարողութեամբ օծուեց եկեղեցու հիմնաքարը: Կնքահայրը եղաւ Ղազուինի նուիրուած ազգայիններից՝ Հերոս Աւետիսեանը, որն եկեղեցուն նուիրեց մէկ մեծ ժամացոյց: Ուրիշ նուիրատուութիւններ եւս եղան: Եկեղեցու շինութեան աշխատանքները տենդագին թափով առաջ էր ընթանում: Շինարարական աշխատանքների հսկիչն էր ազգասէր ու բարեպաշտ՝ դոկտ. Մաթէոս Ոսկանեանը, որ 6-7 ամիս շարունակ հսկեց աշխատանքներին սիրով եւ բծախնդրութեամբ: Վաղ առաւօտից կանգնած էի կառուցուող եկեղեցու հիմքերի մօտ ու ցուցմունքներ էի տալիս գլխաւոր որմնադիր (մէմար) հաջի Մահմուդին, որն հաւատացեալ մի անձնաւորութիւն էր եւ ամէն կերպ աշխատում էր եկեղեցին կառուցել պատշաճ ոճով ու գեղեցիկ:*

*Եկեղեցու զոյգ գմբէթները գծեց Յակոբ խան Կարապետեանը, որ ժամանակին ուսանել էր Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում եւ աշխատում էր կառուցուելիք գմբէթները նմանեցնել Ս. Էջմիածնի մայր տաճարի գմբէթներին: Նոյն թուի Դեկտեմբեր 16ին վերջացան եկեղեցու շինութեան աշխատանքները: Աղօթատան սրբազան անօթները, գրակալները, մոմակալերը եւ այլ իրեր փոխադրեցին նորակերտ եկեղեցին եւ սկսեցինք առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւնները: Ուրախ էի ի սրտէ եւ հոգեպէս մխիթարուած եւ բաւարարուած էի զգում ինձ, որովհետեւ իրականացել էր իմ տարիների երազանքը եւ ղազուինահայ համայնքը ունէր արդէն իր փառահեղ եկեղեցին:*

*Բողոքներ կային, որոնք առարկում էին քանի որ նորակառոյց եկեղեցին օծուած չէ, չպիտի ժամերգութիւն կատարել այնտեղ:*

*Շար.ը էջ 17*


11th International Armenia Fund
Telethon 2008
November 27, 2008 Thanksgiving Day
My home, Armenia
ArmeniaFund
KSCI LA 18 8am-8pm PST Check Local TV Listings or Call 1-800-888-8897
Webcast www.armeniafund.org

# «ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ

Շարունակուածէջ 15-էն

Բացատրեցի որ վիմաքարով կարելի է մինչեւ իսկ Ս. Պատարագ մատուցել: Այդ ասեկոսներին վերջ տալու համար գրեցի Իրանա-Հնդկաստանի Թեմի Կրօնական Խորհրդին եւ խնդրեցի այդ առթիւ լուսաբանութիւն տրուի մեզ: Կրօնական Խորհուրդը հեռագրով յայտնեց որ արտօնւում է վիմաքարով Պատարագ մատուցել: Անդրանիկ Պատարագը մատուցեցի նորակերտ եկեղեցու 1937 Թուի Յունուար 1ին, Նոր Տարուայ օրը: Ներկայ էր ամբողջ ղազուինահայութիւնը:

Յաւարտ Ս. Պատարագի Հայրապետական մաղթանք կատարուեց: Յունուար 3ին հոգեհանգստեան պատշաճ արարողութիւն կատարուեց Յովհաննէս Բարսեղեանի ծնողների եւ դստեր՝ Հռիփսիմէի յիշատակին: Յունուար 5ին եւ 6ին Թաթախման եւ Ջրօրհնէքի առթիւ Պատարագ մատուցուեց Խաչի քաւորը եղաւ բարերարի որդին՝ Մանուկ Բարսեղեանը: Ս. Պատարագից յետոյ եկեղեցւոյ բարերարը մեծ ճաշկերոյթ տուեց իր բնակարանում: Այդպիսով ամէն երեկոյ, առաւօտ, Կիրակի եւ տօնական օրերին, սկսեցին ղօղանջել Ս. Հռիփսիմէի եկեղեցու զանգերը, որ շարունակւում են մինչեւ այսօր:

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորակառոյց եկեղեցու ներքին կահաւորման համար դիմումներ կատարեցի զանազան անձանց, որոնք բոլորն էլ սիրով ընդառաջելով, սկսեցինք եկեղեցին բարեզարդել ստացած նուէրներով: Առաջին նուիրատուն եղաւ սալմաստեցի գինեգործ Սահակ Բաբայեանը, որն սիրով յանձն առաւ մի մեծ գորգ նուիրել եկեղեցուն, որ փռուած է եկեղեցու յատակին, մինչեւ այսօր: Եկեղեցուն մեծ ու փոքր գորգեր նուիրեցին Մանուէլ Սիմոնեանը, Սերգէյ Գասպարեանը, միհրան Արզումանեանը, Ասատուր Թումեանը, Հմայեակ Ասատրեանը եւ ուրիշներ: Ելեքտրական ջահեր նուիրեցին Աւետիս Աւետիսեանը, Վերժինէ Յարութիւնեանը եւ այլ անձինք: Պատշաճ իւղաներկ նկարներ նուիրեցին Արտուշ Մկրտչեանը, Ժորժիկ Մխիթարեանը, իսկ Ս. Տաճարի դռները պատրաստեց եւ նկարեց Սարգիս Սվաճեանը: Եկեղեցու ելեքտրականութեան աշխատանքները յանձնուեց Հայկազ Տ. Անտոնեանին եւ Սարգիս Ջանբազեանին, որոնք շատ մեծ դժուարութեամբ եւ խնամքով կատարեցին այդ աշխատանքը: Եղբայրք Մարտիրոսեանները նուիրեցին երկու մեծ պղնձեայ զանգեր: Սարգիս Մարտիրոսեանը եկեղեցին օժտեց մէկ երգեհոնով: Մկրտութեան արծաթեայ մի մեծ տաշտ նուիրեց Ղազար Տ. Ղազարեանը: Եւ այսպիսով կարճ ժամանակից յետոյ Ս. Հռիփսիմէ եկեղեցին կահաւորուեց ըստ պաշտաճ եւ փառաւոր տեսք ստացաւ: Եկեղեցու շրջափակը ամայի էր, ու բազմաթիւ ոստեր կային: Իմ առաջարկով ամբողջ շրջապատը հաւասարուեց, պարտէզ կառուցուեց, ու հայոց գերեզմանատնից բազմաթիւ ծառեր բերեցին եւ տնկեցին եկեղեցու շրջափակում:

Ղազուինը ընդհանուր առմամբ սակաւաջուր լինելով, մեծ դժուարութիւնների ենք հանդիպում ամրան, այդ նորատունկ ծառերը ջրելու համար: Այդ մարզում արդար է յիշել, իմ երեք որդիների կատարած դերը ամրան շոգ ամիսներին: Նրանք՝ Մեսրոպ, Ներսէս եւ Յովհաննէս, հազիւ 8-12 տարեկան, դոյլերով ջուր էին կրում քաղաքապետարանի այգուց (մօտ 1 քիլոմեթր հեռաւորութեան վրայ) եւ խնամքով ջրում ազգապատկան ծառերը:

Այդպիսով մեր եկեղեցու եւ դպրոցի շրջափակը օժտուեց մի գեղեցիկ եւ կանաչազարդ այգիով, որ մինչեւ այսօր էլ ծառայում է թէ որպէս գեղեցկութիւն եւ թէ որպէս շուաք պարգեւող ամրան շոգերին:

### ՆՈՐԱԿԵՐՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄՆ ՈՒ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆԸ

Ղազուինը ենթակայ լինելով Իրանա-Հնդկաստանի թեմին, տեղւոյս եկեղեցական վարչութիւնը դիմեց Կրօնական Խորհրդին, պարտ ու պատշաճ կարգադրութիւն կատարել եւ ճշտել օծման թուականը: Կրօնական Խորհուրդը մի նամակով յայտնեց, որ այդ նպատակով Ղազուին կը ժամանի նոյն Խորհրդի փոխ նախագահ՝ Գեր. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Իսրայէլեանը եւ օծումը կը կատարի 1937 Թուի Յունիս 27ին, Կիրակի: Այդ առթիւ յայտարարութիւններ տրուեց մամուլին: Մեծ ուրախութեան եւ ցնծութեան օրեր էին ղազուինահայութեան համար: Գերապատիւ Հայր Սուրբը տեղս ժամանեց Յունիս 20ին: Ընդունելութիւնը փառաւոր եղաւ: Ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ այլ պաշտօնական անձինք, իմ գլխաւորութեամբ, կառքերով մեկնեցինք քաղաքից 12 քիլոմեթր հեռաւորութեան վրայ գտնուող Շարիֆաբադ գիւղը, Հայր Սուրբին դիմաւորելու համար:

Հայր Սուրբը Ղազուին ժամանեց Թեհրանի Ս. Գէորգ եկեղեցու դպրապետ՝ Արտաշէս Գարագաշի ընկերակցութեամբ: Հիւրերը նախ այցելեցին եկեղեցի, ապա գնացին եկեղեցու բարերար՝ Յովհաննէս Բարսեղեանի բնակարանը: Շաբաթ Յունիս 26ի երեկոյեան, եկեղեցու նաւակատեաց փառաւոր կարգը կատարուեց: Ապա յաջորդ օրը առաւօտ, ժամի 10ին, սկսուեց Ս. Պատարագի արարողութիւնը: Եկեղեցու երգչախումբը ղեկավարում էր Զօրա Բժշկեանը: Խմբի մենակատարն էր յայտնի երգչուհի՝ Լորիկ Մովսիսեանը, դպրապետներ՝ Արտաշէս Գարագաշը եւ Սեդրակ Բարսեղեանը, սարկաւագ՝ Աբգար Միրզայեանը: Պատարագին Հայր Սուրբին սպասարկում էին տողերիս գրողը եւ Թաւրիզից ժամանած Տ. Մուշեղ Քահանան: Եկեղեցու ներսը եւ բակը լեցուած էր խուռներամ բազմութեամբ: Եկել էին նաեւ Թեհրանից եւ շրջակայ հայաբնակ գիւղերից: Ամենուր խանդավառութիւն էր, բոլորն ուրախ էին եւ երկիւղածութեամբ հետեւում էին Սրբազան արարողութեան: Սրբալոյս միւռոնի հեղումով օծուեց Աւագ սեղանի աջ եւ ահեակ եւ կենտրոնում տեղաւորուած խաչերը, եկեղեցու չորս պատերը: Ապա պատարագիչ Հայր Սուրբը Աւագ սեղանից յայտարարում է «Եկեղեցիս այս, կոչւում է բարերարի լուսահոգի մայր եւ վաղաթառամ դուստր Հռիփսիմէի անուամբ, յանուն Հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, Ամէն»: Երգչախումբը երգում է «Ամէն ալէլուեա»ն, իսկ դպիրները երգում են օրուան պատշաճ շարականները: Յուզիչ էր պահը եւ կարծես այդ սրբազան պահին, երկնային հրեշտակները իջել էին հայոց այդ խնկաբոյր տաճարի մէջ, մասնակից լինելու այդ հիասքանչ արարողութեան: Հաւատացեալ ժողովուրդը յուզուած ու արտասուալից աչքերովը հետեւում էր հոգեւոր արարողութեանը: Ղազուինահայ կեանքում, մի բացառիկ օր եղաւ այդ օրը:

Յաւարտ Ս. Պատարագի, բարերար՝ Յովհաննէս Բարսեղեանի բնակարանում ճաշկերոյթ տրուեց ի պատիւ Հայր Սուրբի եւ միւս հիւրերի:

Յունիս 23ին, Հայր Սուրբը Ռաշտի եւ Անզալու հայ համայնքներին այցելելու նպատակով մեկնեց վերոյիշեալ քաղաքները: Ազգային մարմինների անդամները մինչեւ Աղաբարտ կոչուած գիւղը, ընկերացան Հայր Սուրբին:

# ՈՒՂԵԿՈՐՈՅՍ ԳՆԱՑՔԸ

Շարունակուածէջ 7-էն

գնալ քո տուն:

Անակնկալի եկած, Թաթուլ բա՛ն չի հասկնար: Բայց շուտով կը հաւաքէ ինքզինք:

- Ազա՞տ: Բա ինչո՞ւ: Ամբողջ եօթը ամիս ինչո՞ւ կալանաւորեցիք ինձ եւ իմ անմեղ ընկերոջ: Ինչո՞ւ զոհուեց իմ անբասիր ընկերն էս խայտառակ գնտանում: Եթէ անմեղ եմ, ինչո՞ւ է կալանքը մինչեւ օրս, եւ ինչո՞վ էք հատուցելու մեր երկուսի եօթնամսեայ անարդար եւ անհիմն կալանքի համար: Եթէ մեղաւոր եմ, ինչո՞ւ էք ազատ արձակում ինձ հիմա: Այսքան ահաւոր ոճիրներից ու յանցագործութիւններից յետոյ ինչո՞ւ բա՛ն չէք սովորում ու շարունակում էք ձեր այս նոյն անմիտ եւ անպատկառ խաղը:

Ու կը շարունակէ, քանի իրաւապահ փոխը կը պնդէ լուռ մնալ.

- Ա-հա՜: Իմանում եմ, լաւ իմանում: Դուք շատ լաւ գիտէք, համոզուած էք որ մենք բացարձակապէս անմեղներ ենք՝ ձեր կեղտոտ հաշիւների համար քաւութեան պատահական նոխազներ: Ձեր թանձրամիտ գիւղապետի կարծրամաշկ խելապատակով, դուք մեզ ու միւս քաղբանտարկեալներին խուցն էք գցել որպէսզի մարդիկ, իբր թէ միամտօրէն, ու դարձեալ այդ խելապատակի հաշուարկով, բաւարարուին մեր ազատ արձակումը պահանջելով _ որը եւս մեծ դժուարութեամբ կը «շնորհուի» նրանց: Այսինքն ունենանք կրծելիք մի ոսկոր ու մոռանանք բուն խնդիրը, որ իշխանութեան ապօրինի իւրացումն է՝ հազիւ տասը տոկոս քուէներ հաւաքած զինեալ աւազակների եւ նրանց ուժային ու քրէական վարձկանների կողմից: Ասիկա, որպէսզի ընտրող ժողովուրդը իր շոգին դուրս մղի մեր՝ քաղբանտարկեալների մասին «աղմկելով» ու մոռանալով բարձի տակի թաքուն խնդիրը՝ իշխանութիւնը գողացած աւազակների հրաժարման պահանջքը: Ինձ մինչեւ մահուան նախամուտը հասցնելից յետոյ երաշխաւորութեամբ պայմանական ազատութիւն էք շնորհում որպէսզի գիս եւս սպանած չլինենք էս խուցում: Իսկ իմ ազնիւ բանտընկերը, ձեր ստերի համաձայն, ինքնասպանութիւն գործեց որովհետեւ, իբր թէ, գիտակցել էր իր մեղքերին _ եւ ի հարկէ այդ կոտոշաւոր յերիւրանքն էլ առանց կարմրելու դուք կը հաղորդէք եթերով:

Անպէտք քանի մը թուղթեր ստորագրելէ ետք դուրս կ'ելլէ Թաթուլ: Ամբողջ շրջապատին լսելի ձայնով ան կը գոչէ հատիկ-հատիկ.

- Պարոն փոխ-ոստիկանապե՛տ, ես լաւ գիտեմ մեր բոլորի ողբերգութեան բուն հեղինակը: Հիթլերատիպ երկգլխանին է նա, որ իր անարգ իշխանութեան համար ստորաքարշ թափթփուկների ու քրէական վարձկանների մի խառնածին բանակ կազմեց, իրենց ծառայող ստրուկներին եւ ուժական կոչուած տկարամիտներին կերակրեց, որպէսզի կատղած գայլերի պէս նրանց ձգի ժողովրդի դէմ: Բայց պիղծ շրթներով զինք նախագահ վանկարկող էդ վարձկանները, ինչպէս եւ դու, պարոն փոխ-ոստիկանապե՛տ, վաղը ճշմարտութեան վճռական րոպէին իրանց ճկոյթն անգամ չեն շարժի՝ զինք փրկելու համար: Նա իր սառը չորս աչքերով կը տեսնի անպայման: Ու կը համոզուի վերջապէս թէ բիւրաւոր հայ կտրիճներ եւ ամազոններ հայրենիքի փրկութեան օրուան են սպասում կազմ ու պատրաստ: Նրանք այսօր հաւատքի թափով հպարտ քայլում են Երեւանի մտերիմ փողոցներով, Հայաստանի եւ Արցախի նշխարացած հողերի ամբողջ տարածքում: Մեզի միանալու համար դեռ գունդ առ գունդ նրանք գալու են հայրենի քաղաքներից ու գիւղերից, կալանավայրերից ու գնտաններից, թաքստոցներից եւ աքսորավայրերից: Նրանք վերջին ժամադրութիւն են վերցնելու քեզ հետ, դո՛ւ երկգլխանի հայրենասպան: Ու մի՛ փորձիր կեցնել նրանց: Դու ուզես թէ չուզես, նրանք անպայման կը յարգեն ժամադրութիւնը: Կը գան՝ քո հետ վերջնական հաշուեփակի արդար պահանջով: Ինչ էլ որ անես, նրանք վերջին դատաստանի համար յետեւիցդ գալու են: Գալու են՝ քո երկու չորացած ոճրային գլուխները ճզմելու համար արդարութեան անկողմնակալ դատարանում: Այսօրուանից, տարին 365 օր եւ օրը 24 ժամ, իրանց արժանապատուութեան եւ ազատութեան հերթափոխ պահակներն են նրանք, որպէսզի է՛լ ոչ մի կիսագրագէտ բռնակալ չհամարձակի հարամ անել մեր ժողովրդի խաղաղ կեանքը եւ իր զաւակների գալիք օրերը: Եւ ես նրանց կողքին եմ լինելու մինչեւ իմ վերջին շունչը:

Երկու քայլ ետին, ականջները սրած, փոխ-ոստիկանապետը դանդաղաքայլ կը հետեւի իրեն:

Զինք համակած անդրդուելի խաղաղութեամբ, Թաթուլ կը շարունակէ՝ խօսքն ուղղելով երկգլխանի բացակայ արքայիկին.

- Դու եւ քո մեղսակիցները պիտի շուտով համոզուէք որ որեւէ մէկին արտօնուած չէ բանտարկել մի ամբողջ երկիր ու ժողովուրդ: Ձեզի թոյլ չէ տրուած այսքան շատ ու լաւ մարդիկ այսքան երկար պահել կալանքի տակ՝ ձեր թէթեւաբարոյ քմայքի համար: Եւ ձեր դաժան լուծի մութ ու ցուրտ ձմեռը այսքան երկար պահել անպատիժ: Որքան էլ երկարի այդ ձմեռը, անպայման յաջորդելու է գարունը: Ու քանի մենք եւ դուք տարբեր բեւեռների բնակիչներ ենք, մեր գարունը լինելու է ձեր ձմեռը: Սա իմ անխախտ խոստումն է:

(Վերջ)

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՓԻՒՆԻԿ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԱՏԱՐ



*Ֆութպոլի Հայաստանի առաջնութեան 24-րդ տուրում կայացան 4 հանդիպումներ, որոնցից կենտրոնականը «Միկա» եւ «Գանձասար» մրցավէճն էր:*

*Այս խաղում գրանցուեց ոչ-ոքի՝ 1:1: «Միկա»ն եւ «Գանձասար»ը 42-ական միաւորով շարունակում են ընթանալ 3-4-րդ տեղերում:*

*Առաջատար «Փիւնիկ»ը Գիւմրիում հիւրընկալուեց «Շիրակ»ին: Առաջին կէսից յետոյ գիւմրեցիները յաղթում էին 1:0 հաշուով, սակայն 2-րդ կէսում «Փիւնիկ»ին յաջողուեց փոխել խաղի ընթացքը: 52-րդ րոպէին հաշիւը հաւասարեցրեց Հենրիխ Մխիթարեանը, իսկ հանդիպման վերջին րոպէին Ալբերտ Թադեւոսեանը յաղթանակ պարգեւեց «Փիւնիկ»ին: Այս կամային յաղթանակից յետոյ ախոյեանը 53 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը: 2-րդ տեղում ընթացող «Արարատ»ը վաղը կը հիւրընկալուի «Բանանց»ին:*

*Եւս մէկ հանդիպում կայացաւ «Հրազդան» մարզադաշտում, որտեղ մրցեցին «Կիլիկիա»ն եւ «Ուլիս»ը: Հանդիպումը աւարտուեց 1:1 հաշուով:*

*24-րդ տուրի վերջին խաղում «Հրազդան» մարզադաշտում ուժերը չափեցին «Բանանց»ը եւ «Արարատ»ը: Հանդիպումը մեծ արժէք ունէր ախոյեանութեան համար պայքարող «Արարատ»ի համար, քանի որ նրա հիմնական մրցակից «Փիւնիկ»ը արդէն յաղթանակ էր տօնել:*

*Խաղի հաշիւը բացուեց արդէն 3-րդ րոպէին, երբ Ռենատոն, հիանալի անցում կատարելով խաղադաշտի կենտրոնից, կարողացաւ շրջանցել 5-6 ֆուտպոլիստների եւ դուրս գալով մեն-մենակ դարպասապահի դէմ, գնդակը նրա վրայով ուղարկեց «Բանանց»ի դարպասը:*

*«Արարատ»ի ուրախութիւնը երկար չտեւեց, քանի որ 5 րոպէ անց Ջուլիանո Հիմենեսը տուգանային հրապարակում ձեռքով խաղ թոյլ տուեց, եւ մրցավարը անմիջապէս 11 մեթրանոց նշանակեց, որը անվրէպ իրացրեց Վիտալի Լեղենյովը:*

*Ընդմիջումից յետոյ «Արարատ»ը կրկին առաջ անցաւ հաշուի մէջ: «Բանանց»ի տուգանային հրապարակում ստեղծուած խառնաշփոթ իրավիճակում ամենաարագը կողմնորոշուեց Վահանգն Մինասեանը, որի հարուածից յետոյ գնդակը դիպչելով Սարգիս Կարապետեանին՝ յայտնուեց դարպասում:*

*«Բանանց»ի կազմում փոխարինման դուրս եկած Արտակ Դաշեանն 90-րդ րոպէին հեռահար հարուածով գրաւեց Պրազեանի դարպասը՝ խփելով իր թիմի պատասխան գնդակը: Հանդիպումը աւարտուեց 2:2 հաշուով, ինչը ձեռնտու չէր կողմերին: «Արարատ»ը արդէն 3 միաւորով է ետ մնում «Փիւնիկ»ից, իսկ «Բանանց»ը գործնականում զրկուեց 3-րդ տեղում յայտնուելու հնարաւորութիւնից:*

| | |
|---|---|
| «Շիրակ» - «Փիւնիկ» | 1-2 |
| «Արարատ» - «Բանանց» | 2-2 |
| «Կիլիկիա» - «Ուլիս» | 1-1 |
| «Միկա» - «Գանձասար» | 1-1 |

*24-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը ունի այսպիսի տեսք.*

| | Խաղ | Յաղ. | Հաւ. | Պարտ. | Կօլ | Կէտ |
|---|---|---|---|---|---|---|
| «Փիւնիկ» Երեւան | 24 | 16 | 5 | 3 | 34-13 | 53 |
| «Արարատ» Երեւան | 24 | 15 | 5 | 4 | 42-19 | 50 |
| «Գանձասար» Կապան | 24 | 12 | 6 | 6 | 34-23 | 42 |
| «Միկա» Աշտարակ | 24 | 12 | 6 | 6 | 34-22 | 42 |
| «Բանանց» Երեւան | 24 | 9 | 7 | 8 | 29-23 | 34 |
| «Ուլիս» Երեւան | 24 | 5 | 6 | 13 | 17-29 | 21 |
| «Շիրակ» Գիւմրի | 24 | 4 | 3 | 17 | 13-35 | 15 |
| «Կիլիկիա» Երեւան | 24 | 2 | 4 | 18 | 18-57 | 10 |


**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...**

**Մեծ Ժողովրդականութիւն Վայելող**
**Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը**
**Այժմ Կը Սփռուի**
**GlobeCast**
**Արբանեակային Հեռատեսիլով**
**Ամերիկայի, Գանատայի Եւ Մեքսիքոյի**
**Ամբողջ Տարածքին**

**Դուք Կրնաք Դիտել**
**Հայաստանեան Լուրեր – Քաղաքական Վերլուծութիւններ**
**Երաժշտական Հաղորդումներ – Եւայլն**

**Մանրամասնութիւններու Համար**
**Հեռաձայնել 818.547.9696**


## ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

*Հայ շախմատիստ Սամուէլ Տէր-Սահակեանը Վիեթնամում ընթացող շախմատի աշխարհի առաջնութեան 9-րդ տուրում պարտութեան մատնեց առաջատար Սոն Նիւգենին (Վիեթնամ) եւ 7 միաւորով հաւասարուեց նրան: 18 տարեկանների պայքարում հանդէս եկող Սամուէլը լրացուցիչ ցուցանիշներով այժմ 2-րդն է, սակայն այս յաղթանակից յետոյ Սամուէլը ախոյեանութեան համար պայքարելու ռեալ հնարաւորութիւն ստացաւ:*

*15-ամեայ շախմատիստը, որը 2008թ. Եւրոպայի պատանեկան առաջնութեան արծաթէ մեդալակիր է, իր վարկանիշով 5-րդն է մրցաշարում, սակայն բաւական յաջող է հանդէս գալիս եւ բոլոր հնարաւորութիւնները ունի առնուազն լաւագոյն եռեակում յայտնուելու համար:*

*Մեդալ նուաճելու հնարաւորութիւններ պահպանում է նաեւ 10-ամեայ Մանուէլ Պետրոսեանը, որը 6.5 միաւորով ընթանում է 8-րդ տեղում:*

*14 տարեկանների պայքարում Կարէն Գրիգորեանը 5.5 միաւորով ընթանում է 22-րդ տեղում: Տղաների պայքարում Հայաստանի միւս ներկայացուցիչները աւելի համեստ արդիւնքներ են ցոյց տուել եւ գործնականում զրկուել մեդալի հնարաւորութիւնից:*

*Աղջիկների պայքարում 5.5-ական միաւոր են վաստակել Ռուզան Շաքրեանը (16տ) եւ Սուսաննա Գաբոյեանը (12), մնացած մասնակիցները այլեւս մեդալների չեն յաւակնում:*

********

*Յունաստանի Կալիթեա քաղաքում աւարտուեց շախմատի Եւրոպայի ակումբային 2008թ. առաջնութիւնը: Տղամարդկանց եւ կանանց պայքարում հանդէս եկած 4 հայկական թիմերից ոչ մէկին չյաջողուեց գրաւել մրցանակային տեղ:*

*Տղամարդկանց պայքարում ախոյեանի կոչումը նուաճեց Ռուսաստանի ախոյեան «Ուրալը», որը իր վարկանիշով 1-ին էր մրցաշարում եւ այս յաղթանակը միանգամայն տրամաբանական էր: Իսկ ահա վարկանիշով 2-րդ այս մրցաշարում Երեւանի «Միկա»ն էր: Հայաստանի ախոյեանի կազմում էին ընդգրկուած յայտնի գրոսմայստերներ, այդ թւում Լեւոն Արոնեանը եւ Մագնուս Կառլսենը: «Միկա»ն նաեւ միակ թիմն էր, որը կարողացաւ յաղթել «Ուրալ»ին, սակայն այդ յաղթանակից յետոյ հայկական ակումբը չկարողացաւ շարունակել յաղթարշաւը եւ ի վերջոյ 10 թիմային եւ 24 անհատական միաւորով զբաղեցրեց 12-րդ հորիզոնականը:*

*Աւելի յաջող հանդէս եկաւ «Բանկային Արքան», որից սպասելիքները մեծ չէին: Այս թիմը վերջին տուրում 3.5:2.5 հաշուով պարտութեան մատնեց Բրեմենի «Վերդերին»: Թիմային 10 եւ անհատական 27 միավորով Հայաստանի փոխ-ախոյեանը գրաւեց 7-րդ հորիզոնականը:*

*Երիտասարդ եւ պատանի շախմատիստներով համալրուած ՖԻՄԱՆ այս տուրում 5:1 հաշուով ջախջախեց մակեդոնական «Գամբիտ Պեկսիմ» թիմին: 7 թիմային միաւորով ՖԻՄԱ-ն գրաւեց 20-րդ հորիզոնականը:*

*Կանանց պայքարում «Միկա»ն վերջին տուրում 3:1 հաշուով յաղթեց ռուսական «Ֆինեկին»: «Միկա»ն այս յաղթանակից յետոյ թիմային 9 միաւորով գրաւեց 5-րդ հորիզոնականը, մինչդեռ 2006թ. այս թիմը դարձել էր ախոյեան, իսկ 2007թ. գրաւել էր 3-րդ հորիզոնականը: Իսկ ախոյեանի կոչումը 2-րդ տարին անընդմէջ նուաճեց «Մոնտէ Կառլոն»:*

UNITED STATES POSTAL SERVICE®

**Statement of Ownership, Management, and Circulation**
**(All Periodicals Publications Except Requester Publications)**

| 1. Publication Title | 2. Publication Number | 3. Filing Date |
|---|---|---|
| MASSIS WEEKLY | 0 6 6 7 - 3 1 0 | 10-1-08 |

| 4. Issue Frequency | 5. Number of Issues Published Annually | 6. Annual Subscription Price |
|---|---|---|
| WEEKLY, except two weeks in August | 50 | $50 |

7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®)
1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

Contact Person

Telephone (Include area code)
(626) 797-7680

8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer)
1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not leave blank)

Publisher (Name and complete mailing address)
SDHP 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

Editor (Name and complete mailing address)
DR. ARSHAG KAZANJIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

Managing Editor (Name and complete mailing address)
VAHE ACHABAHIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

| | | | |
|---|---|---|---|
| a. Total Number of Copies (Net press run) | | 3,500 | 3,500 |
| b. Paid Circulation (By Mail and Outside the Mail) | (1) Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541(Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies) | 123 | 123 |
| | (2) Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies) | 383 | 383 |
| | (3) Paid Distribution Outside the Mails Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS® | 2,400 | 2,400 |
| | (4) Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®) | 66 | 66 |
| c. Total Paid Distribution (Sum of 15b (1), (2), (3), and (4)) | | 2,972 | 2,972 |
| d. Free or Nominal Rate Distribution (By Mail and Outside the Mail) | (1) Free or Nominal Rate Outside-County Copies included on PS Form 3541 | 40 | 40 |
| | (2) Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541 | 35 | 35 |
| | (3) Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail) | | |
| | (4) Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means) | 300 | 300 |
| e. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15d (1), (2), (3) and (4)) | | 375 | 375 |
| f. Total Distribution (Sum of 15c and 15e) | | 3,347 | 3,347 |
| g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page #3)) | | 153 | 153 |
| h. Total (Sum of 15f and g) | | 3,500 | 3,500 |
| i. Percent Paid (15c divided by 15f times 100) | | 88.7% | 88.7% |

16. Publication of Statement of Ownership

☐ If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the NOV. 1, 2008 issue of this publication.

☐ Publication not required.

# ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ՞, ԹԷ՞ ԼԻԲԵՐԱԼԻԶՄ

Շարունակուածէջ 5-էն

ունի՝ ապահովել ինքնաֆինանսաւորումը եւ էլ աւելի հարստացնել բուհական ադմինիստրացիային: Սոցիալական արդարութեան մի քանի տարրեր հաստատելու համար ամրագրուել է, որ պետութիւնը տրամադրում է պետպատուէրներ: Սա նշանակում է, որ պետութիւնը հաշուարկում է, թէ քանի ոլորտային մասնագէտի կարիք ունի նա այս տարի: Ստացւում է, որ մեր պետութիւնը տարեկան ունի 3 կամ 4 իրաւաբանի, 5 քաղաքագէտի եւ 6 տնտեսագէտի կարիք: Պետութեան վիճակի ողորմելիութիւնն ապացուցող այս երեւոյթն անգամ հասկանալի կը լինէր այն դէպքում, եթէ աւարտելուց յետոյ մի քանի ուսանողներ պայմանագիր կնքէին պետութեան հետ եւ իրենց գիտելիքներն ի սպաս դնէին մեր երկրի կառուցմանը: Սակայն մի քանի տասնեակ հազար երիտասարդներ, որոնց մտաւոր ունակութիւնների մասին կ՚երազէին աշխարհի հզօրները, Հայաստանում համալրում են անգործների շարքերը: Անհրաժեշտ է օրէնքի ուժով ստիպել խոշոր եւ միջին գործարարներին ամէն տարի աշխատանքի վերցնել նրանց գոնէ մի մասին: Հաւատացնում եմ, որ պետութիւնը կարող է հարկերի կրճատման միջոցով ստեղծել մեխանիզմ, երբ ընկերութիւնն ինքը շահագրգիռ կը լինի նման պայմանագրեր ստորագրելուն: Եթէ այս բարեշրջող կառավարութիւնը, որի հետ առանձնապէս մեծ յոյսեր չեն կապում, գնա նման քայլի, ապա նախարարների գրագիտութեան մակարդակի բարձրացման ջատագով վարչապետը կը կարողանայ արձանագրել, որ իր կառավարման օրօք արել է իրապէս ազգօգուտ եւ չնորհակալ գործ: Հակառակ պարագայում, ստացւում է, որ բուհերը ոչ թէ մասնագէտ պատրաստելու, այլ սեփական գոյութիւնը եւս մէկ օրով երկարաձգելու համար են: Մի խնդրի մասին եւս. մենք կտրուկ դէմ ենք, որ կրթական համակարգը վերածուի խղճուկ եւ էժանագին բիզնեսի: Պէտք է անպայման թափանցիկ դարձնել, թէ ինչ չափորոշիչներով են ստեղծւում 50-60 ուսանող ունեցող ինչ-որ անհասկանալի երեւոյթներ, որոնք իրենց, իհարկէ, բուհ են կոչում: Միջազգայնագէտ-տնտեսագէտ, համաշխարհային տուրիզմի մասնագէտ, ինժեներ-քաղաքագէտ պատրաստող այս վաչխառուական ցանցը խնդիր ունի միայն եւ միայն սեփական գրպանն աւելի մեծացնել՝ մեր քաղաքացիների հաշուին:

Ի դէպ, վերադառնալով պետական բարձրագոյն ուսումնական հաստատութիւններին՝ ուղղակի պարտադիր է ամբողջ երկրում կատարել մի համալիր հաշուառում՝ առկայ մասնագիտութիւնների պահանջարկը հասկանալու համար: Չափից աւելի կարեւոր է նաեւ վերականգնել արհեստագործական ուսումնարանները, որովհետեւ մեր երկիրը, բացի իրաւաբաններից եւ տնտեսագէտներից, որոնց թիւը, թերեւս, մի քանի 100 հազարի է հասնում, նաեւ ատաղձագործի, շինարարի, դարբնի եւ ոսկերիչի կարիք ունի: Եթէ մենք չենք գնում կրթութեան ոլորտի առողջացման այս ճանապարհով, ապա նորից, տարածաշրջանի գիտական կենտրոն դառնալու բարձրագոյն եւ վերամբարձ բառերից վերածւում ենք ուղեղ եւ աշխատուժ արտահանող մի երկրի:

3. Առողջութիւն բոլորի համար

Պետական եւ միջազգային վիճակագրական ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ մեր բնակչութեան առողջութիւնը բնութագրող ցուցանիշները անհանգստացնող միտումներ ունեն: Մասնաւորապէս, նկատւում է մահացութեան եւ հիւանդացութեան ցուցանիշների աննախադէպ աճ: Եթէ այս ամէնին էլ աւելացնում ենք այն ահազնացող թուերը, որոնք կապուած են ծնելիութեան իջեցման եւ երիտասարդ բնակչութեան արտագաղթի հետ, ապա, համաձայնէք, պատկերը բաւական յուսահատեցնող է: Այստեղից հետեւութիւն, որ մեր հասարակութիւնը հիւանդ է, եւ այդ հիւանդութիւնից անմասն չէ առողջապահական համակարգը: Սոյն համակարգի ախտերից մէկը եւ, թերեւս, ամենագլխաւորը, կոռուպցիոն դրսեւորումներն են: Անգամ յայտարարուեց, որ այս խնդիրն ամենաշատը առկայ է առողջապահութեան ոլորտում: Վստահ եմ, որ առողջապահութեան համակարգում ներգրաւուած մասնագէտներն անձնուրաց նուիրուած են իրենց աշխատանքին, եւ այս ամէնի խօսուն վկան է պատերազմական տարիներին, տնտեսական ճգնաժամի պայմաններում ոլորտի աշխատակիցների բարձր գիտակցութիւնն ու ազգանուէր գործունէութիւնը: Այո, առողջապահութեան համակարգը կոռումպացուած է, բայց ոչ այն պատճառով, որ մեր բուժաշխատողները փող շատ են սիրում, այլ այն պատճառով, որ պետութիւնը այս բնագաւառում իրականացնում է ապաշնորհ քաղաքականութիւն եւ հետեւողականօրէն առողջապահութեան համակարգը մղում դէպի կոռուպցիոն դաշտ: Պետութեան կողմից մեր հանրութեանն առաջարկուող պոպուլիստական եւ ակնհաճոյ լայնածաւալ ծրագրերի դիմաց նոյն պետութիւնը հաստատում է այնպիսի բիւջէ, որի միջոցով հնարաւոր է իրականացնել այդ ամպագոռգոռ ծրագրերի միայն 20 տոկոսը, որի հետեւանքով բնակչութեան լայն զանգուածների համար բուժօգնութիւնը դարձել է անմատչելի: Նախեւառաջ հենց սրանով է պայմանաւորուած համակարգի ստուերայնութիւնը: Այս կերպ ոտնահարւում է ոչ միայն քաղաքացու՝ բուժօգնութիւն ստանալու սահմանադրական իրաւունքը, այլ նաեւ բուժաշխատողների իրաւունքները: Այստեղից հետեւութիւն՝ մեր առողջապահութիւնը, բազմաթիւ այլ ոլորտների հետ միասին, սահմանադրական չէ:

Այսպիսով, գործող իշխանութիւնների թեթեւ ձեռքով տնտեսութիւնը ախտահարուած է մենաշնորհով եւ հովանաւորչութեամբ, պետութիւնը՝ կոռուպցիայով, հասարակութիւնը՝ կազմակերպուած յանցագործութեամբ:

Եւ վերջում, մի բան յստակ է, որ արհամարհելով քաղաքացու սոցիալական իրաւունքները, բաժանելով ազգը էլիտար թալանչիների եւ լայն ընչազուրկ աշխատաւորական զանգուածների՝ այս իշխանութիւններն օր առաջ արագացնում են այն սոցիալական պայթիւնը, որին նրանք աւելի քան 10 տարի գնում են նպատակասլաց եւ հետեւողականօրէն:

# ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԵԼ ԿԱՐԵՒՈՐ ՄԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ

Շարունակուածէջ 1-էն

սայական սպանութիւնը: Սակայն 62 վերոյիշեալ լուսանկարներու բնօրինակներէն պահպանուած են միայն մի քանին, որոնց հիմնական մասը վատ վիճակի մէջ:

Այսպիսով, «Գաղթականական ալպոմի» մէջ զետեղուած լուսանկարներու վաւերականութիւնը կը փաստէ այս եզակի եւ լաւ պահպանուած լուսանկարի միջոցով: Լուսանկարի հակառակ կողմը ռուսերէն լեզուով մակագրուած է «Թուրքական զօրքերու կողմէ կենդանի այրուած հայերը Շեյխալան գիւղին մէջ»: Աւելին, լուսանկարը թուագրուած է 74 թուանիշով, ինչը կը վկայէ ռուս զինուորներու կողմէ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն առնուած լուսանկարներու աւելի մեծ հաւաքածուի գոյութեան մասին:

Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտը կը յայտարարէ թէ, հետամուտ պիտի ըլլայ յայտնաբերելու եւ ամբողջացնելու հաւաքածուի միւս լուսանկարները, ինչ որ կը նպաստէ Ինստիտուտի նախաձեռնած աշխատանքներու յաջողութեան՝ 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան առնչուող լուսանկարներու եւ այլ փաստաթղթերու ու վաւերագրերու հաւաքագրման:

# ԹՈՒՐՔ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐ ՕՊԱՄԱՅԻ ԵՒ ՄԸՔՔԷՅՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐՈՒ ՄՕՏ

Շարունակուածէջ 1-էն

կոչուած հայկական ցեղասպանութեան մեղադրանքներու վերաբերեալ», - կը մեկնաբանէ Հուրիէթ: - «Դավութօղլուն եւ Կինիկլիօղլուն նաեւ պիտի փնտռեն Ամերիկայի աջակցութիւնը՝ «Կովկասեան համագործակցութեան փլաթֆորմի» ձեւաւորման գծով»:

Ամիսներ առաջ Պարաք Օպաման յստակ դարձուցած էր որ, նախագահ ընտրուելու պարագային պիտի ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը:

Հանրապետական թեկնածու Ճոն Մըքքէյն հայ ընտրողներուն որեւէ խոստում չէր տուած եւ, ըստ երեւոյթին, մտադիր չէ փոխելու այս հարցով հանրապետական ներկայի վարչակազմի դիրքորոշումը, որ է՝ 1915-ի իրադարձութիւնները նկարագրել որպէս հրէշաւոր յանցագործութիւն, զանգուածային սպանդ եւ տեղահանում, բայց չօգտագործել «ցեղասպանութիւն» բառը:

Միւս կողմէ Թրքական լոպպին Թիրախ դարձուցած է գոնկրէսական Ատէմ Շիֆը, Նոյեմբեր 4-ին տեղի ունենալիք ընտրութիւններուն աջակցելով Շիֆի հանրապետական մրցակից Զարլզ Հանին:

Ուաշինկթընի մէջ գործող Թրքական Համախմբումը միայն Սեպտեմբեր ամսուայ ընթացքին Հանի ընտրապայքարին նուիրած է 2,300 տոլար:

«Թրքական լոպպին պիտի չյաջողի կասեցնել Հայկական Ցեղասպանութեան ճանաչման գծով իմ աշխատանքները: Աւելի քան մէկ ու կէս միլիոն հայեր ոչնչացան նախորդ դարու առաջին ցեղասպանութեան ընթացքին, հետեւաբար, ժխտումի ուժերը ոչ մէկ գումարով պիտի չկարողանան պատմութիւնը խեղաթիւրելու եւ կամ գիս մղելու ետ կանգնիմ ճանաչման աշխատանքներէն»,- յայտարարեց Կլէնտէլը եւ շրջակայ քաղաքները ներկայացնող գոնկրէսականը:

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՔՐՈՒՀԻ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Նորայր եւ Մարի Խաչատուրեաններ կու գան իրենց խորազգաց ցաւակցութիւնները յայտնելու յատկապէս Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեաններուն եւ զաւակներուն, եւ համայն հարազատներուն:

Առ այդ $50 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:


## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
## Palm Springs

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել*

(818) 246-0125



Վարձման գները են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |


«Քաջ Նազար» հրատարակչականի և հեռուստաժամի
նախաձեռնութեամբ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ
ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ
(Հիմնուած 1999թ.)
ARMENIA'S CHILDREN CHRISTMAS GIFT FUND
SINCE 1999
"Kach Nazar" Magazine &"Kach Nazar" TV Broadcasting Presents
CHRISTMAS FUND FOR ARMENIAN ORPHANS AND DISABLED CHILDREN AND
THE RESTORATION OF CHILDREN'S HOMES (Est. 1999)
ՕԳՆԵՔ ՄԵԶ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ԿԵՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ
HELP US TO BUILD OUR FUTURE . . .
9-ՐԴ ԹԵԼԵԹՈՆ 2008
ԿԻՐԱԿԻ, ՆՈՅԵՄԲԵՐ 2
(10 ԺԱՄ) A.M.G.A. TV
9-TH ANNUAL TELETHON
SUNDAY, NOVEMBER 2, 2008
(10 HOURS) A.M.G.A. TV
Life Time Sponsors
CROWNE PLAZA
HOTELS RESORTS
Commerce Casino
LOS ANGELES
WELLS FARGO
535 N. Brand Blvd. Glendale, CA
GLENDALE KIA
Yeghyayan & Associates
Vartkes Yeghayan
Attorney at Law
Glendale Medical Pharmacy
ԳԼԵՆԴԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ
Dr. Robert Mokhtarian
Glendale West Pharmacy
and Medical Supply
Dr. Vahan Aladadian
UNIVERSAL
SERVICE EXCHANGE, INC.
MONEY TRANSFER
Please Make your Check Payable to
CHRISTMAS FUND FOR ARMENIAN
O.D.C.R.C.H.
WELLS FARGO ACCOUNT #1736834043
P.O. BOX 250038 • GLENDALE, CA 91225 • Tel: (818) 246-0125 or (818) 606-2070
TAX ID # EIN 26-3208049
VISA
MasterCard
E-mail: forourkids@gmail.com